№ 163 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՅՈՒԼԻՍԻ
1910
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՅՈՒԼԻՍԻ № 163
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ
Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
5 ՌՈՒԲԼԻ։
12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 դրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՁԱՆՑԱՌՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԻ

Մեր թղթակիցը, որ առիթ է ունեցել անցնելու Կարսի և Կաղզուանի գաւառների գիւղերով, շատ անմխիթարական տեղեկութիւններ է հաղորդում մեզ խոլերայի տարածման առիթով։

Խոլերան տարածվել է ընդարձակ տարածութեան վրա և զոհեր է տանում գիւղերից։

Գիւղացիները չեն հետեւում այն հիմնական պայմանին, որ չը խմեն հում ջուր։

Աննպաստ տեղեկութիւններ են ըստացվում նոյնպէս Ախալցխայի, Բորժոմի շրջակայքից։

Այնտեղ, ուր կան աղբիւրներ և ջուրը վերցվում է բղխելու տեղերից, մարդիկ ապահովված են խոլերայի բացիլներից, բայց ուր ջուրը վերցվում է հոսող վտակներից, գետերից, առուներից, այնտեղ վտանգ կայ վարակման։ Եւ եթէ ջուրը վարակվել է, նա անշուշտ պէտք է զարգանայ ստամոքսի մէջ և ունենայ իր հետեւանքները։

Պէտք է նկատել, որ գիւղերում սկսվել է ամենաեռանդուն գործունէութեան շրջանը։ Ամբողջ տարվայ մէջ ոչ մի ժամանակ գիւղացին այնպէս չէ աշխատում, ինչպէս ներկայումս, երբ խոտի և հացի հնձելու այլ և ցելը վարելու ժամանակն է։

Գիւղացին վաղ առաւօտից ուժգին կերպով աշխատում է և սաստիկ ծարաւում է թէ իր աշխատանքից և թէ կիզիչ արևից։ Ծարաւ մարդը ագահութեամբ ջրի վրա է ընկնում, և եթէ վերջինիս մէջ բուն են դրել խոլերայի բացիլները, նա կուլ է տալիս նրանց մեծ քանակով։

Շատերը անհոգ են վերաբերվում լեռնային շրջանում դէպի առողջապահական կանոնները, ենթադրելով որ այդ շրջանում խոլերան չի տարածվի ցրտի և մաքուր օդի պատճառով։

Եւ յիրաւի՝ այդ շրջանում խոլերան աւելի դանդաղ է զարգանում։

Բայց այն մեծ զանցառութիւնները, որ մեր ազգաբնակութիւնն է ցոյց տալիս դէպի սանիտարական պահանջները, դարձնում են ամենաապահով տեղերը վտանգաւոր, և ահա այսօր մենք տեսնում ենք, թէ ինչպէս լեռնաստանների և սարաւանդների մի ընդարձակ շրջան հանդիսանում է իբրև խոլերայի աւերածութիւնների մի ընդարձակ դաշտավայր։

Դուք, երկրի զանազան կողմերում գտնվող ինտելիգենտ անհատներ, թողէք ձեր անտարբեր վերաբերմունքը դէպի ազգաբնակութեան առողջութիւնը և վերցրէք ձեզ վրա աւագ եղբայրների դեր և հասկացրէք գիւղացուն, որ նա պէտք է հետեւի մի քանի հիմնական կանոնների, որպէսզի ազատ մնայ խոլերայի կոտորածից։ Դուք, ուսանողներ, ուսուցիչներ, քարոզեցէք և հասկացրէք տառապեալ ժողովրդին, որ նա պէտք է զգոյշ լինի իր կերածի և խմածի վերաբերութեամբ, որ նա որոշ զգուշութիւններով խնամի խոլերայով հիւանդին և վարակված իրերը չը լուանայ գետերում, չը տայ ուրիշներին և չը տարածի հիւանդութիւնը աւելի ընդարձակ շրջաններում։

Երբ մարդիկ զգոյշ են և կատարում են առողջապահական կանոնները, այն ժամանակ նրանք կարող են ապրել խոլերատարած տեղերում և մնալ ազատ նրա կործանիչ ազդեցութիւնից։

Ձեզ օրինակ՝ Թիֆլիսը։ Այստեղ խոլերան երևաց աւելի վաղ, քան մեր երկրի շատ ու շատ տեղերում։ Ներկայումս ոչ մի տեղ խոլերան այնքան թոյլ չէ, որքան Թիֆլիսում։ Պատճա՞ռը։ Որովհետեւ սպառնական դրութիւնը ստիպեց քաղաքացիներին գործադրել առողջապահական կանոններ՝ զգուշանալ անբարեխառն կեանքից, չը գործածել մեծ քանակութեամբ մրգեր, խմել եռացրած ջուր, անջատել հիւանդներին առողջներից։

Խոլերայի դէմ կարելի է մաքառել։ Եւ պէտք է մաքառել։

Մեր ինտելիգենցիայի վրա սեպուհ պարտականութիւն է ծանրանում օգնութիւն ցոյց տալ ժողովրդին այն ծանր օրերին, երբ վտանգ է սպառնում այդ ժողովրդի առողջութեան և կեանքին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 24 յուլիսի

Օրէնսգրքի մէջ հրատարակված է, որ Կովկասի Փոխարքային վերապահված առանձին արտօնութիւնները՝ Կասպիական ծովի առևտրական նաւատորմի վերաբերութեամբ՝ մնում են դարձեալ ցնոր կարգադրութիւն։ (Հ. Գ.)

Վլադիկավկազ, 25 յուլիսի

Եկաւ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլօվը։ (Հ. Գ.)

Ստոկհօլմ, 24 յուլիսի

Երէկ տեղի ունեցաւ խաղաղութեան կոնգրէսի վերջին նիստը։ Մահմէդ-Ֆերիդ բէյը առաջարկեց կոնգրէսին համակրանք յայտնել Եգիպտոսին և խնդրեց եգիպտական հարցը դնել հետեւեալ կոնգրէսի օրակարգի մէջ։ Լեհերը բողոքեցին, որ լեհական հարցը չէ մտցված ներկայ կոնգրէսի օրակարգի մէջ։

Հետեւեալ կոնգրէսը, Իտալիայի հրաւէրով, կը կայանայ Հռօմում 1911 թ.։ (Հ. Գ.)

Բագու, 26 յուլիսի

Մոսկով-Կովկասեան ընկերութեան նաւթահանքում խփեց ֆօնտան, որ տալիս է օրվայ մէջ մինչև 350,000 պուդ նաւթ։ (Հ. Գ.)

Բագու, 24 յուլիսի

Հաջինսկիի և Կասմօֆների նաւթահանքում Բալախանու մէջ գազի շատութիւնից մեքենան պայթեց, որից և հրդեհ առաջացաւ։ Այրվեցին երկու նաւթահան վիշկաներ, անպէտքացան երկու մեքենայ և ջրհան գործիքը։ Հրդեհն անցաւ Միրզոյեւների նաւթահօրը, ուր այրվեցին երկու վիշկաներ և նաւթը։ (Հ. Գ.)

Գորօդօկ, 25 յուլիսի

Երեան հանվեցին 2000-ից աւելի աբինային փորհարինքի դէպքեր. մեռան 150 հոգի։ (Հ. Գ.)

Լոնդօն, 26 յուլիսի

Հնդկաստանից հաղորդում են, որ Կալկաթայում և ուրիշ տեղերում ձերբակալված բէնգալացիների մօտ գտնված փաստաթղթերը վկայում են, որ լայն ճիւղաւորված դաւադրութիւն է կազմակերպվում Հնդկաստանում բրիտանական տիրապետութիւնը բառնալու նպատակով։ (Հ. Գ.)

Պարիզ, 26 յուլիսի

Հաւասի գործակալութեանը հեռագրում են Մադրիդից, որ պաշտօնական շրջաններում ոչինչ յայտնի չէ պապի՝ Սպանիայի թագաւորին գրած նամակի մասին, չը գիտեն՝ թէ ինչի վրա է հիմնված լրագիրների այն տեղեկութիւնը՝ իբր Վատիկանի և Սպանիայի յարաբերութիւնները բարելաւվել են. սխալ է նաև այն տեղեկութիւնը՝ իբր սպանական դեսպանը բողոքել է աւստրիական կառավարութեան առաջ Բուրբոնի Խայմի ագիտացիայի դէմ։ (Հ. Գ.)

Սան-Սեբաստիան, 25 յուլիսի

Եկան երկու էսկադրօն ժանդարմներ. կայարանները գրաւած են զօրքերով. քաղաքում ժողովվել են 2000 կլերականներ։ Ձերբակալվեցին 4 հոգի, որոնք փողոցում աղաղակում էին՝ «կեցցէ պապը»։ (Հ. Գ.)

Մադրիդ, 24 յուլիսի

Սան-Սեբաստիանում ցոյց կազմակերպող կոմիտէտը վճռեց հրաժարվել ցոյցից, որի մասին կը հրատարակվի հրովարտակ կաթօլիկական լրագիրներում։ (Հ. Գ.)

Բարսելօնա, 24 յուլիսի

Երէկ երեկոյեան ընդհարումներ տեղի ունեցան կարլիստների և արմատականների միջև։ Ոստիկանութիւնը ցրեց թշնամացածներին։ (Հ. Գ.)

Բերլին, 24 յուլիսի

Երէկ Թիւրքիային վաճառվեցին «Կուրֆիւրստ Ֆրիդրիխ Վիլհելմ» և «Վէյսենբուրգ» զրահանաւերը 19 միլիօն մարկով։

Նոյեմբերին կրօնպրինցը մտադիր է մեկնել գիտական ճանապարհորդութեամբ Արևելեան Ասիա և Հնդկաստան։ (Հ. Գ.)

Պարիզ, 24 յուլիսի

Լրագիրները հրատարակել են այն դաշնակցութեան կանօնադրութիւնը, որ կազմել են ֆրանսիական երկաթուղային ծառայողների ու բանւորների գլխաւոր կազմակերպութիւնները մեքենավարների ու կաչէգարների ֆեդէրացիայի և երկաթուղային ծառայողների ազգային սինդիկատի հետ։ Դաշնակցութիւնը լիակատար համերաշխութիւն է պահպանելու գործադուլի դէպքում։ (Հ. Գ.)

Վիննիպեգ, 24 յուլիսի

Արտակարգ գնացքը, որով գնում էին Կանադայի մինիստր-նախագահը և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը, ընդհարվեց Ռեգինա կայարանի մօտ ապրանքատարի հետ։ Երկու մինիստրները վիրաւորվեցին, մի մարդ սպանվեց։ (Հ. Գ.)

Զագրեբ, 24 յուլիսի

Ի նկատի ունենալով որ սերբ-խորվաթական կոալիցիային անվստահութիւն յայտնվեց, պան Տօմաշիչը կառաջարկէ թագաւորին արձակել սէյմը և նոր ընտրութիւններ կատարել տալ աւելի կայուն կառավարական մեծամասնութիւն կազմելու համար։ Կոալիցիօն խորվաթական կուսակցութիւնները միանում են մի չափաւոր կուսակցութեան, որ կարող լինի իրականացնել Խորվատիայի օրինական իրաւունքները, պահելով բարի յարաբերութիւններ Ունգարիայի և սերբերի հետ։ (Հ. Գ.)

Ներկայումս Ստոկհօլմում կայացող խաղաղութեան կոնգրէսին, ֆինլանդական հարցի քննութեան ժամանակ, Մոսկվայի «Խաղաղութեան Ընկերութեան» պատուիրակ իշխ. Պ. Դ. Դոլգորուկօվը (I. Դումայի փոխ-նախագահը) ներկայացրել է հետեւեալ յայտագիրը.

«Ֆինլանդական հարցի վերաբերեալ իմ անձնական վերաբերմունքը նոյնն է, ինչ որ իմ ընկերներինը, ըստ քաղաքական կուսակցութեան՝ ժողովրդական ազատութեան կուսակցութեանը, մի հայեացք, որ բոլորովին ակնյայտ պարզվեց Պետական Դումայում նրանց արտասանած ճառերի մէջ։ Այդ վերաբերմունքը լաւ յայտնի է թէ Ռուսաստանում, թէ Ֆինլանդիայում։ Մենք նրան ամենևին չենք քօղարկում, և ապագայում մեզ մօտ, Ռուսաստանում, մենք եռանդուն կերպով առաջ պիտի մղենք արդար և մեր կարծիքով օրինական վերաբերմունք դէպի ֆինն ժողովուրդը։ Բայց այստեղ, միջազգային կոնգրեսում, ռուսական քաղաքականութիւնը քննելիս արդարև շատ փափուկ և ծանր է ռուս պատուիրակի դրութիւնը, ինչպէս դուք կը հասկանաք։ Ուստի ես ստիպված եմ հեռանալ այդ քննութեան նիստերից և գերադասում եմ նոյնիսկ ներկայ չը լինել ժողովներին՝ ձեզ չը խանգարելու համար»։

Յայտնի է, որ այդ հարցի քննութեան միջոցին հեռացել է Ֆինլանդիայի առանձնայատկութիւնների բազմամեայ ջերմ պաշտպան, նախկին սենատոր և այժմ սէյմի պատգամաւոր՝ քաջայայտնի իրաւաբան-հրապարակախօս Լէօ Մեխելինը։

Բայց որքան էլ կորեկտ լինի ռուս պատուիրակների վարքը, նրանք ապագայում, պարզ է, որ առարկայ են դառնալու չարախնդաց յարձակումների՝ Պետական Դուման բացվելուն պէս։ («Р. В.»)

Ստոկհօլմ.—Խաղաղութեան կոնգրէսը բանաձևով բողոքում է ֆինլանդացիների, լեհերի և հրէաների ճնշումների դէմ։

Մադրիդ.—Թագաւորական հրապարակի վրա Բարցելօնում գտնվեց սոսկալի ույժի մի ռումբ։ Տրամադրութիւնը յուզվի է։

Մադրիդ.—Կառավարութիւնը գրաւել է Սան-Սեբաստիան տանող բոլոր ճանապարհները։

Պետերբուրգ.—Ֆինլանդիայի մի քանի տեղերում երևան է հանված խոլերա։

1910 թւի առաջին կիսամեակին Ռուսաստանում կայացվել է 294 մահապատիժ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՖԻԼԻՍԻ ԲԺՇԿՈՒՄԸ

Մարդկութեանը մեծ չարիք պատճառող հիւանդութիւններից մէկն էլ սիֆիլիսն է, որ կոչվում է լիւէս, վատ և անբուժելի ցաւ։

Անցեալ ամիս Վիէննայում աւստրո-ունգարական բժշկական միութեան նիստում տեղի են ունեցել մի շարք գիտական վիճաբանութիւններ Ֆրանկֆուրտի պրոֆէսոր Էրլիխի գտած հակասիֆիլիսային նոր միջոցի մասին։

Նիստի ժամանակ պրիվատ-դոցէնտ Պիկը ի միջի այլոց ցուցադրել է «Rudolfspital» հիւանդանոցում սիֆիլիսից բուժվող մի կնոջ և բացատրել, որ պրոֆ. Էրլիխի գտած դեղը հիւանդ կնոջ մարմնի մէջ սրսկելուց յետոյ անցել է հինգ օր և մորթի բծախտութիւնը անյայտացել է։ Բացի այդ՝ Պիկը յայտնել է, որ 30 բուժւորների վրա կատարած իր փորձերից երևում է, որ այդ նոր միջոցը գործածելի է նաև լիւէսի ծանր շրջաններում, երբ սովորաբար գործ են ածվում եօդ և սնդիկ (mercurius)։

Ներարկումները, որոնք կատարվում են մի քանի տեղ մարմնի զանազան մասերում, սկզբում առաջացնում են ծանր ցաւեր, որոնք տեւում են միայն չորս օր, ապա դադարում։ Լինում են դէպքեր, երբ հիւանդի տաքութիւնը սրսկելուց յետոյ բարձրանում է մինչև 38°,6, բայց ոչ աւելի։

«Ընդհանուր առմամբ,—այսպէս է վերջացրել իր ճառը Պիկը,—պէտք է ասել, որ պրոֆ. Էրլիխի հակասիֆիլիսային նոր միջոցը տալիս է հրաշալի հետեւանքներ, որոնք չեն ստացվել մինչև հիմա գործածվող միւս միջոցներից»։

Բայց կարելի՞ է այդ նոր գիւտով ընդմիշտ բուժել սիֆիլիսը. այս հարցը, ըստ Պիկի, դեռ անպատասխան կը մնայ, որովհետեւ տակաւին չնչին ժամանակ է անցել այն օրից, երբ նորը սկսվել է գործադրվել. պէտք է սպասել երկար ժամանակ։

Պիկին յաջորդել է զինուորական բժիշկ Դէկը, որ 26 լիւէտիկների վրա կատարած իր փորձերի հիման վրա վկայել է նոյնը նոր միջոցի մասին։ Դէկի ասելով սիֆիլիսի ամենածանր շրջաններում (syphilstarda) առաջին և եթ ներարկումից յետոյ նկատելի է առողջութեան վերականգնումը։ Նրա ասելով նոր միջոցը նոյնչափ լաւ ազդել է նաև ջղերի վրա, որոնց քայքայումը առաջացած է եղել սիֆիլիսից։

Օրինակի համար, ուղեղացաւից տանջվող մի բուժւոր կորցրած է եղել գրելու ընդունակութիւնը. առաջին սրսկումից յետոյ նա սկսել է գրել այնպէս, ինչպէս իր առողջ ժամանակը։

Պրոֆ. Էրլիխը իր այդ գիւտն արել է անցեալ տարի նոյեմբեր ամսին եապօնացի բժիշկ Հատայի և բժիշկ Բէրտհէյմի հետ միասին։

Սիֆիլիսով վարակած ծովախոճկորին (cavia cobaya) սրսկել են այդ դեղը և 24 ժամ անց ծովախոճկորը բուժվել է։ Դեռ դեղը չը սրսկած՝ ծովախոճկորի արիւնը ենթարկվել է Վասսերմանի ռէակցիային, որից երևացել է, որ արեան մէջ կան սպիրօխէտներ—«Spirochaetae pallidae» (սիֆիլիսի սաղմեր)։

Ներարկումից յետոյ նոյն ռէակցիան ցոյց է տուել, որ սպիրօխէտները սպանված և արտահանված են օրգանիզմից։

Մարտ ամսին պրոֆ. Էրլիխը առաջարկել է պրոֆ. Վէկսէլմանին գործադրել իր դեղը և մարդկանց վրա։ Իր առաջին փորձը պրոֆ. Վէկսէլմանն արել է մի 6 օրական լիւէտիկ նորածինի վրա, որին սրսկել է 0,3 գրամ Էրլիխի դեղից։

24 ժամից յետոյ նորածինի արիւնը հետազօտել են և չեն գտել ոչինչ։ Մանուկը մինչև հիմա էլ Վէկսէլմանի հիւանդանոցում ողջ է, չը նայած որ մինչև ներարկումը նա եղել է այնքան թոյլ, որ հազիւ թէ երեք օր ապրէր։ Մի քանի անգամ մանուկների վրա փորձեր անելուց յետոյ, Վէկսէլմանը անցել է հասակաւորների և ամեն դէպքում ստացել աջող հետեւանքներ։

Ներկայ ժամանակ պրոֆ. Էրլիխը միայն կլինիկների բժիշկներին է բաց թողնում իր դեղից օգտվելու համար, չը նայած որ ամեն օր նա ստանում է հազարաւոր հեռագիրներ, ուր հիւանդները, նոյնիսկ և առողջ մարդիկ խնդրում են պրոֆեսորին մատչելի դարձնել իր դեղը ամենքի համար։

Սակայն գերմանացի գիտնականը տակաւին վաղաժամ է համարում բաւարարել նրանց նախ այն պատճառով, որ դեռ սպասում է տեղեկանալ կլինիկներում կատարվող մի շարք հետազօտութիւնների մասին, ապա նա պատրաստ չունի իր դեղից որոշ քանակութիւն ամենքի համար։

Ինքը, պրոֆ. Էրլիխը, իր գտած միջոցի մասին այն կարծիքի է, որ առ այժմ չէ կարելի ամենակտրուկ կերպով յայտնել, թէ նոր միջոցով սիֆիլիսը արմատապէս բուժելի է։ Շատ մեծ դժուարութիւններ կան կաթուածը բուժելու դէպքում. այստեղ հարցը այն հիւանդների մասին է, որոնց՝ սիֆիլիսը արդէն հասցրել է չափազանց ծանր հարուածներ։ Ժառանգական սիֆիլիսը հեշտ է բուժվում. մանուկներին, օրինակի համար, ամենայն հեշտութեամբ կարելի է բուժել, նոյնպէս և լաւ հետեւանքներ են ստացել սիֆիլիսի առաջին, երկրորդ և երրորդ շրջաններում։

Հակասիֆիլիսային այդ նոր միջոցը (և բուժելու մեթօդը) օրէ-ցօր հռչակվում է գիտական աշխարհում ոչ միայն արտասահմանում, այլ և Ռուսաստանում։ Ամենուրեք ամենայայտնի սիֆիլիդօլօգների կարծիքն այդ մասին միանգամայն դրական է և նպաստաւոր։

Յուլիսի 9-ին բժիշկ Վայնշտօկը իր երեք բուժւորների (паціентъ) հետ Պետերբուրգից ճանապարհվում է Բեռլին, նախօրօք դրական հեռագիր ստացած լինելով պրոֆ. Էրլիխից ճանապարհվող հիւանդներին իր դեղով բուժելու մասին։ Ներկայ ժամանակ արտասահման ուղևորվողների թիւը հասնում է տասնեակ հազարների։

Պետերբուրգում Կալինկինսկայա հիւանդանոցի պրոֆ. Ս. Կուլնևը վերջին օրերս սկսել է գործադրել իր հիւանդների վրա՝ սիֆիլիսի դէմ այդ նոր դեղը։ Եւ այդ մասին ահա թէ ինչ է ասում նա։

«Ես կարող եմ կտրուկ կերպով յայտնել, որ գտնված է lues-ի դէմ միջոց. առաջին սրսկումից յետոյ հիւանդները իրանց զգում են անհամեմատաբար լաւ։ Հարցը միայն նրանումն է, թէ այդպէս հեշտ և արագ կարելի՞ կը լինի սիֆիլիսի դէմ մաքառել հիւանդութեան միւս շրջաններում։ Այդ մասին ես իմ կարծիքս միայն երեք տարուց յետոյ կը յայտնեմ։ Ցանկանալով օգնել այդ ցաւով տառապողներին, ես հրաւիրել եմ ինձ մօտ օրդինատորի պաշտօնով փորձառու բժիշկ Իւ. Իվերսենին, որը բազմակողմանի կերպով ծանօթ է նոր դեղի գործածութեանը և մշտական գրագրութեան մէջ է պրոֆ. Էրլիխի հետ»։

Յուլիսի 6-ին Պետերբուրգում Կալինկինսկայա հիւանդանոցում առաջին անգամ պաշտօնապէս Իւ. Իվերսենը սկսել է փորձեր կատարել լիւէսով բռնված հիւանդների

ների դատավճիռ. մահվան պատիժ են ստացել 110։ Տուգանքի են ենթարկվել 84 լրագիր։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 24 յուլիսի

Բաթումում ձերբակալված թիւրքաց պալատի պատգամաւոր Բաստրմաջեանին ազատելու կարգադրութիւնը գեղեցիկ տպաւորութիւն գործեց և վերջ դրեց պալատի մի մասի հակառուսական սուր արշաւանքին։

Երէկ, առ. ժ. 4-ին, քաղաքը զարթնեց քաղաքից դուրս գտնվող բանակում տեղի ունեցած հրացանաձգութեան ձայնից։ Պարզվեց, որ այն զինուորները, որոնք ուղարկվելու էին Սիբիր ապստամբներին զսպելու համար, չեն հնազանդվում կարգադրութեան, որով և հարկ եղաւ զէնքի դիմել խաղաղեցնելու նրանց։ (Հ. Գ.)

Կ. Պօլիս, 25 յուլիսի

Անգլիական յատուկ միսսիան ներկայացաւ սուլթանին, յանձնելով Գէորգ թագաւորի նամակը։

Սուլթանական խրադէով պատուիրագրվեց Բեռլինի թիւրքաց դեսպանին գնել Գերմանիայում տասն միլիոն մարկով «Կայզեր» տիպի երկու զրահանաւ։

Մեծ վէզիր Հակկը փաշան յուլիսի 29-ին մեկնում է Մարիէնբադ։ Նրա բացակայութեան ժամանակ նրա պարտականութիւնները կատարելու է զինուորական մինիստրը։ (Հ. Գ.)

Նիւ-Եօրկ, 26 յուլիսի

«Ասօշիէտ-Պրէյսը» հաղորդում է, որ Նիւ-Եօրկի դրամատէրերի մի խումբ մշակել է մի ծրագիր՝ հարիւր միլիոն դոլլարի ընկերակցութիւն կազմել Ասիական Թիւրքիայում երկաթուղիներ անցկացնելու համար։ Մտադրութիւն կայ շահագործել Քիւրդիստանի և Տիգրիսի ու Եփրատի շրջանի հանքային իւղը։ (Հ. Գ.)

Աթէնք.—Հակառակ Թիւրքիայի խոստումներին, յունական բոյկոտը շարունակվում է։ Տրամադրութիւնը ճնշված է։ Նախատեսվում է բարդութիւն։

Արտասահմանեան լրագիրների ասելով թիւրքական պարլամենտի անդամ և Ռուսաստանում 1905 թւին քաղաքական յանցանքներում մեղադրվող Կ. Բաստրմաջեանի ձերբակալութիւնը Բաթումում խոր տպաւորութիւն է թողել Կ. Պօլսի շրջաններում։

Պատգամաւոր Բաստրմաջեանը թիւրքահպատակ է, Էրզրումում ծնված, ուսումնասիրել է քիմիա Ժընեվի համալսարանում և վերջերս ծառայելիս է եղել Կովկասի պղնձահանքերից մէկում։ Նա Դաշնակցութեան անդամ է։ Թիւրքիայում սահմանադրութիւն մտցնելուց յետոյ նա վերադարձաւ հայրենիք, որ մինչև այդ փակ էր նրա համար՝ Կ. Պօլսում 1895 թ. Օտոմանեան բանկի գրաւմանը մասնակցելու պատճառով։ Թիւրք պարլամենտում նա ներկայացուցիչ է Էրզրումի կողմից և յայտնի է որպէս բարեխիղճ և գործունեայ դեպուտատ։ Նրա ձերբակալութեան առթիւ թիւրք կառավարութիւնը դիմել է մի հարցմունքով Կ. Պօլսի ռուս դեսպանին, որը, լուրերին նայած, յայտնել է թէ՝ Էրզրումի պատգամաւորի ձերբակալումը տարաձայնութիւնների արդիւնք է։ Դեսպանը խոստացել է միջոցներ ձեռք առնել, որպէս զի Բաստրմաջեանը բանտից ազատվի։

(«P. B.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 24 յուլիսի

Մէջլիսում թշնամի կուսակցութիւնները երդում տուին մոռանալ ամբողջ անցեալը, պաշտպանել սահմանադրութիւնը, հնազանդվել օրէնքներին և զինաթափ անել բոլոր զէնք կրելու իրաւունք չունեցողներին։

Համաձայնութիւնը վստահութիւն չէ ներշնչում։ (Հ. Գ.)

Թէհրան, 25 յուլիսի

Քաղաքը յայտարարված է պատերազմական դրութեան մէջ. շրջում են ուժեղ ոստիկանական և ժանդարմական պահակախմբեր։

Բախտիարները գրաւեցին մէջլիսը և դիրքեր բռնեցին։ Ազգաբնակութիւնը, ֆէդայիները և Թաղի-զադէի կուսակցութիւնը դադարեցրին զէնքերի յանձնումը։ Ֆէդայիները կենտրոնացան Սաթթար և Բաղըր խաների հրամանատարութեան ներքոյ։ (Հ. Գ.)

Ուրմիա, 25 յուլիսի

Քիւրդերը ռուզիչ ջրից զրկեցին տասնեակ գիւղերի։ Քաղաքին խմելու ջուր մատակարարող ջրանցքը քանդված է։ Կարգը վերականգնելու համար ուղարկված են հարիւր ձիաւորներ։ (Հ. Գ.)

Թէհրան, 26 յուլիսի

Կիրակի օրը առաւօտեան ռուսական դեսպանը անձամբ շրջեց ռուսական հաստատութիւնները և այցելեց ռուսահպատակներին, ցուցմունքներ տալով վտանգ եղած դէպքում։

Գերմանական դեսպանը և իտալական հաւատարմատարը այցելեցին Սաթթար խանին Աթաբէգի կալուածքում՝ յորդորելով հնազանդվել, և առաջարկելով իրանց միջնորդութիւնը։

Ֆէդայիները գրաւած ունեն երկու դիրք. Սաթթար և Բաղըր խաները Աթաբէգի ծառաստանում, իսկ սալդար Մունիրի՝ Տուշան-Թէփէի գիւղերի մօտ։ Մի քանի ռուսահպատակներ արդէն թագնվել են միսսիայի քաղաքային ու ամառանոցային շինութիւնների մէջ։

Բախտիար Զէրգամ-ուս-Սալթանէն մեկնեց Աբդուլազիմ։ Կոզակների բրիգադան գտնվում է Շիրվանի ճանապարհին՝ ֆէդայիների ճանապարհը կտրելու նպատակով՝ փախուստի դէպքում։

Ֆէդայիները Աթաբէգի ծառաստանում շրջապատված են կառավարական զօրքերով։

Կիրակի, ցերեկվայ ժ. 3-ին սկսվեց հրացանաձգութիւն։ Զօրքերը կրակ բացին ֆէդայիների վրա։ Ֆէդայիները փախչում են։ Սպանված են բազմաթիւ բախտիարներ։ Կռիւը դադարեց գիշերը։ (Հ. Գ.)

ՌՈՒՍԵՒՐՈՊԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

II

Ֆինլանդիա, 10 յուլիսի

Ֆինլանդիայի նկարագրութիւնը ես տուել եմ «Մշակի» ընթերցողներին դեռ 1903 թ., երբ առաջին անգամ ես այցելեցի այս երկիրը։

Այսօր հրատապ խնդիրն այս փոքրիկ, բայց իր կուլտուրայով, իր բնակիչների չարքաշ, տոկուն և աշխատասէր կեանքով նշանաւոր երկրի համար ռուսաց Պետական Դումայի կողմից քուէարկված և ընդունված այն օրէնսդրական ակտն է, որ առիթ տուեց Պուրիշկևիչին մեծ հրճուանքով բացագանչել՝ „Finis Finlandiae“ (վերջացաւ Ֆինլանդիան)։ Եւ ինչո՞ւ վերջացաւ. որովհետև նոր օրէնսդրութիւնը գալիս է վերջ դնելու այն ներքին ինքնավարութեան, որ Ֆինլանդիան վայելում էր մինչև այսօր։

«Հազար լճերի երկիրը», ինչպէս սովորաբար կոչվում է Ֆինլանդիան, իր գեղեցիկ և աննման լճերի, ջրվէժների և շխերների համար, որոնք ամառը մի դրախտանման երկիր են դարձնում նրան, այսօր մեծ սուգի մէջ է և կոչ է անում, թէև բոլորովին խաղաղ և օրինական միջոցներով, քաղաքակիրթ ազգերի և ռուս ինտելիգենցիայի ու ազատամտական տարրերի խղճմտանքին՝ թոյլ չը տալու, որ իր իրաւունքները ոտնակոխ լինեն, այլ այն ինքնավարութիւնը, որ Ալեքսանդր I կայսրը շնորհել է իրան, երբ Ֆինլանդիան 1808-9 թ. միացվեց Ռուսաստանի հետ, մնայ այսուհետև էլ անխախտ։ Ազատամիտ ռուս հասարակութիւնը, եւրոպական շատ պարլամենտներ իրանց համակրութիւնն են յայտնում ֆինլանդական ժողովրդին՝ իր կրած ծանր հարուածի համար, բայց այդ համակրութիւնը լոկ պլատօնական է, որովհետև ֆինլանդական հարցը Ռուսաստանի ներքին գործն է և որևէ պետութեան ներքին գործերին միջամտելու իրաւունք չունի մի այլ պետութիւն կամ երկիր։

Հետևաբար՝ մնում է խնդիրը աւելի պարզութեամբ քննել և տեսնել ճիշդ է արդեօք, որ Ֆինլանդիայի համար պատմութեան մէջ բացվում է նոյն էջը, ինչ-որ բացվեց Լեհաստանի համար, որի քաղաքական անկախութեան կորստի առիթով արտասանված հռչակաւոր „Finis Pologniae“ խօսքը այսօր ծաղրով Պուրիշկևիչը, այս պրօֆէսիօնալ սկանդալիստը, ուղղում է Ֆինլանդիայի հասցէին, գոռալով՝ „Finis Finlandiae“։

Նախ, պէտք է ասեմ, որ ոչ մի տեղ Ֆինլանդիայում չէ նկատվում այն յուզված դրութիւնը, այն շարժումը, որ առիթ տար ասելու, ինչպէս կարծում էին ոմանք, թէ երկրում կարող է ապստամբութիւն ծագել։ Ռուս նացիօնալիստների կողմից այդ գրգռիչ, պրովոկացիօն լուրերը, անշուշտ, որոշ նպատակով են բաց թողնվում, գրգռելու ռուսական հասարակական կարծիքը ֆինն ժողովրդի դէմ։ Ֆինն ժողովուրդն այնքան լրջամիտ, ծանրաբարոյ և զգոյշ է, որ հազար անգամ չափող, մի անգամ կտրող է և երբէք յախուռն գործողութեան կողմնակից չէ եղել։ Նա, ի հարկէ, միայն կրաւորական դիմադրութիւն ցոյց կը տայ նոր օրէնքի կիրառութեան և կաշխատէ օրինական ճանապարհներով պաշտպանել իր իրաւունքները, մանաւանդ որ այժմ հրատարակվել է ոչ թէ ուղղակի օրէնք ֆինլանդական աւտոնոմիան ջնջող, այլ միայն մի օրինագիծ, որի հիման վրա ռուսաց կառավարութիւնն իրաւունք է ստանում հրատարակել ընդհանուր օրէնքներ ամբողջ կայսրութեան և Ֆինլանդիայի համար։ Այդ նոր օրինագիծը չէ ջնջում դեռ Ֆինլանդիայի աւտոնոմիան, թէև ծանր հարուած է հասցնում նրան։

Արդ, ինչո՞ւմ է կայանում խնդրի էութիւնը։

Ինչպէս յայտնի է, Ֆինլանդիան մինչև 1808 թ. կազմում էր Շվեդիայի մի մասը։ Ռուսաստանը՝ Շվեդիայի դէմ մղած իր երկարամեայ պատերազմներից յետոյ, 1808—09 թ. կարողացաւ նուաճել Ֆինլանդիան զէնքով՝ աջակցութեամբ ֆինների, և Շվեդիան ստիպվեց ընդմիշտ հրաժարվել այդ երկրից յօգուտ Ռուսաստանի, 1809 թ. սեպտ. 5-ին Ֆրիդրիխսհամում կնքված դաշնագրով։ Այն ժամանակ Ալեքսանդր I կայսրը, հրատարակելով մի մանիֆեստ, ուղղված Ֆինլանդիայի ժողովրդին, և գումարելով սէյմ (տեղական պարլամենտ) Բօրգօ քաղաքում, յայտնեց Ֆինլանդիայի միացումը Ռուսաստանի հետ և հանդիսաւորապէս խոստացաւ պահպանել և յարգել երկրի հիմնական օրէնքները, որոնցով նա մինչ այդ կառավարվում էր, այն է՝ խոստացաւ պահպանել ֆինն ժողովրդի կրօնը, նրա օրէնքները և հաստատութիւնները։ Յետագայում, Ալեքսանդր I-ի յաջորդները ամեն անգամ իրանց հրովարտակներում կրկնեցին նոյն խոստումները։

Եւ հիմնվելով գլխաւորապէս Բօրգօսի սէյմում կատարված խոստումների և տրված հրովարտակի վրա՝ Ֆինլանդիան ամբողջ 100 տարվայ ընթացքում (1808—1908 թ.) կարողացաւ ստեղծել իր համար մի այնպիսի վիճակ, որ այսօր և դեռ վաղուց գրգռել է շարունակ ռուս շովինիստների և թթու ազգասէրների նախանձը ու դրդել նրանց վերջ տալ այդ երկրի առանձնաշնորհեալ վիճակին։ Եւ, ճշմարիտ, ռուսական ամբողջ կայսրութեան մէջ՝ փոքրիկ Ֆինլանդիան հանդիսացաւ մի սահմանադրական և ինքնավար (աւտօնօմ) երկիր, մի երկիր, որ ունի իր սեփական Մեծ-Իշխանը (ռուսաց կայսրը), իր սէյմը կամ պարլամենտը, իր սենատը, իր ներքին առանձին օրէնքները, իր դրօշակը, իր դրամը, իր նամակադրոշմը և իր անկախ հաստատութիւնները՝ կրթական, կուլտուրական, իր ոստիկանութիւնը, մաքսատունը և այլն։ Նա ունի նոյնիսկ զօրք, որ ծառայում է միայն Ֆինլանդիայում։ Նրա կապը Ռուսաստանի հետ կայանում է միայն նրանում, որ ռուսաց կայսրը համարվում է Մեծ Իշխան, նա է գումարում և արձակում սէյմը և ունի իր փոխանորդը (գեներալ նահանգապետ), որի իշխանութիւնը սակայն սահմանափակված է։ Միևնոյն ժամանակ Ֆինլանդիան չէ մասնակցում կայսրութեան ընդհանուր պետական որևէ տուրքերին։ Եւ շնորհիւ այդ արտօնեալ վիճակի, շնորհիւ իր ինքնավարութեան, նա կարողացաւ մի դարի ընթացքում ստեղծել սեփական այնպիսի մի բարգաւաճ վիճակ, այնպիսի մի կուլտուրա, որի մասին ֆրանսիական պարլամենտը իր հանրագրի մէջ հետևեալ կերպով է խօսում.

«Այն օրից, երբ Ալեքսանդր I տուեց Բօրգօսում, 1809 թ., Ֆինլանդիային, ազգի աստիճան և յանձնեց սէյմին նրա գործերի սահմանադրական կոնտրոլը, Ֆինլանդիան յաջորդաբար բարձրացաւ քաղաքակիրթ ազգերի աստիճանին։ Նրա կուլտուրան, նրա յառաջանքը դէպի հասարակական կարգը, նրա օրէնսդրական որոշումների իմաստութիւնը դարձրին այդ երկիրը Ռուսաստանի կայսերական թագի համար մի գեղեցիկ գոհար և ամբողջ աշխարհի համար սքանչացման մի առարկայ»։

Վէճի առարկան հետևեալն է։ Ֆինլանդացիները պնդում են, որ թէև Ֆինլանդիան կազմում է ռուսական պետութեան մի մասը, բայց նա որոշ ակտերի և հրովարտակների զօրութեամբ կազմում է մի ինքնավար երկիր իր սեփական օրէնքներով և հաստատութիւններով, այն է՝ վայելում է կատարեալ անկախութիւն իր ներքին գործերի տնօրէնութեան մէջ։ Մի քանիսը մինչև անգամ այնքան առաջ են գնում, որ ասում են, թէ նա մի դաշնակից տէրութիւն է, կապված Ռուսաստանի հետ որոշ դաշնագրով։ Այս կէտը, ի հարկէ, վիճելի է, որովհետև պատմական հաստատ, անհերքելի փաստեր չը կան դրա մասին, բայց մի բան հաստատ է, այն, որ, արդարև, Ֆինլանդիան, կազմելով Ռուսաստանի մի անբաժան մասն, հանդիսացել է մի ինքնավար և աւտօնօմ երկիր իր ներքին գործերի կառավարութեան վերաբերմամբ։

Միւս կողմից արդարութիւնը ստիպում է խոստովանել, որ Ֆինլանդիայի ներքին օրէնքները բաւական ճնշիչ են ռուսների համար և երբեմն վիրաւորական նոյնիսկ ռուս ազգի ինքնասիրութեան համար։ Մի քանի օրէնքներ նոյնիսկ հնադարեան են։ Այսպէս, օրինակ, հրէաներին արգելված է խստիւ Ֆինլանդիայում ապրել։ Ռուսները իրաւունք չունեն վարել Ֆինլանդիայում հասարակական, ուսուցչական, պետական և այլ պաշտօններ, մինչև որ ֆինլանդական հպատակութիւն ձեռք չը բերեն։ Մինչ ֆինները ամբողջ Ռուսաստանում վայելում են բոլոր միւս հպատակների հետ հաւասար իրաւունքներ, կարող են վարել բոլոր պաշտօնները, նոյնիսկ մինիստր դառնալ։ Ռուսներին արգելված է Ֆինլանդիայում երկաթուղիներ կառուցանել, սահմանափակված է նրանց իրաւունքը՝ անշարժ կալուածներ ձեռք բերելով և ռուս առևտրականները նկատվում են իբրև օտարերկրեայ առևտրականներ, որոնք մաքս պէտք է վճարեն և որոշ սահմանափակումների ենթարկվեն։ Պետական պաշտօնական լեզուն շվեդերէնն է, մինչ ռուսերէնը ոչ մի տեղ չէ ընդունված։

Այս ամենը առիթ է տալիս ռուս նեղմիտ ազգասէրներին տրտնջալ, բայց, ի հարկէ, այդ թերութիւնները կարելի է դարմանել այլ միջոցներով և ոչ ջնջելով երկրի ինքնավարութիւնը, որ այնքան մեծ զարկ է տուել նրա կուլտուրային և բարգաւաճման։

Եւ, վերջապէս, ռուսական մեծ ազգի պէս մի ազգ ու մի երկիր չը պէտք է ունենայ ֆինն ժողովրդի պէս մի փոքրիկ ազգի ինքնավարական սիստէմից, քանի որ այդ փոքրիկ ժողովուրդը իր լօյալութեան ապացոյցներն է տուել միշտ։ Նա միայն խնդրում է յարգել իր դարաւոր իրաւունքները, որ նուիրագործել են և ռուսաց կայսրները իրանց հրովարտակներով։

Թողնելով Ֆինլանդիան և գնալով այն երկիրը, որից Ֆինլանդիան և վերցրել է իր կուլտուրան, այն է Շվեդիան, ես կարող եմ ասել, թէ որքան էլ սահմանափակվի Ֆինլանդիայի ներքին ինքնավարութիւնը, բայց նրա կուլտուրան այնպիսի հաստատ հիմունքների վրա է կառուցված, որ միշտ կը մնայ օրինակելի և կը բարգաւաճէ։ Մանաւանդ որ տեղիք կայ կարծելու, որ ռուսաց կառավարութիւնը կը բաւականանայ միայն մի քանի այնպիսի օրէնքների հրատարակութեամբ, որոնց նպատակն է ուղղել մի քանի անհարթութիւններ, որոնք վիրաւորում են ռուսական ինքնասիրութիւնը։

Հ. Առաքելեան

ՊՐՕՖ. Գ. ԽԱԼԱԹԵԱՆԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Ներկայումս Թիֆլիսումն է պրօֆ. Գրիգոր Խալաթեանը։

Նա եղել է Կ. Պօլսում, որտեղից ճանապարհորդել է Բարձր Հայք և այնտեղից եկել Անդրկովկաս։

Երէկ մենք ունեցանք մանրամասն խօսակցութիւն պրօֆեսորի հետ «Մշակի» խմբագրատանը։ Ճանապարհորդութեան տպաւորութիւնները, հրատապ մի քանի խնդիրներ, որոնք յուզում են թիւրքահայերին և ռուսահայերին, գրական մի քանի ուսումնասիրութիւններ՝ առարկայ էին մեր խօսակցութեան։

Հաղորդենք մի քանի կէտեր Գ. Խալաթեանի ճանապարհորդութիւնից։

Կ. Պօլիս նա գնացել է Վիեննայից։ Որքան գեղեցիկ է Կ. Պօլսի տեսքը, երբ ճանապարհորդը մուտք է գործում այդ քաղաքը ծովից, այնքան հասարակ, անշուք, նոյնիսկ տխուր է երևացել ճանապարհորդին մուտքը ցամաքից։

Կ. Պօլսում նա տեսնվել է պատրիարք Դուրեանի և բազմաթիւ ազգայինների հետ։ Եղել է նոյնպէս Մխիթարեան հայրերի բացած հիմնարկութիւններում։

Թէ պատրիարքի և թէ ազգայինների խօսակցութիւնները կենտրոնացած են եղել վերջին եղելութիւնների, կրթական ծրագիրների, հասարակական-կուլտուրական խնդիրների, ի միջի այլոց եկեղեցիներում ժողովներ գումարելու խնդրի, Երուսաղէմի վիճակի և նրա բարեկարգութեան ենթադրութիւնների մասին։

Գ. Խալաթեան ցանկանում է եղել ուղևորվել Երուսաղէմ մի քանի ուսումնասիրութիւններ անելու նպատակով։ Աչքի առաջ ունենալով այնտեղ տիրող խառն դրութիւնը, յետաձգել է իր դիտաւորութեան կատարումը և որոշել է գնալ Էրզրում։

Այս ճանապարհորդութիւնը նա կատարել է Վիեննայի Մխիթարեան ուխտի միաբան, յայտնի ուսումնասէր հայր Տաշեանի հետ։

Նախ քան այդ ճանապարհորդութեան ձեռնարկելը Գ. Խալաթեանը այցելել է Մխիթարեանների դպրոցները Կ. Պօլսում։ Պանկալթիի դպրոցի համար դիտաւորութիւն կայ կառուցանել մի նոր հոյակապ շինութիւն։ Յատակագիծը կազմված է շատ ընդարձակ և կը պահանջէ մեծ ծախք։ Ե՞րբ կաջողվի իրականացնել այդ ծրագիրը՝ յայտնի չէ. բայց դպրոցի ներկայ շէնքը չափազանց աննախանձելի վիճակի մէջ է։

Կ. Պօլսից ճանապարհորդները եկել են Տրապիզոն։ Այցելել են քաղաքը և ի միջի այլոց վենետիկցիների հիմնած դպրոցը, որի ղեկավարն է հայր Թոմաճանը։

Այդտեղ ի միջի այլոց իր հոյակապութեամբ և բարեկարգութեամբ ճանապարհորդների ուշադրութիւնն են գրաւել յունական դպրոցները։ Եւ առհասարակ, Գ. Խալաթեանի կարծիքով, յոյները շատ առաջադէմ տարր են Թիւրքիայում։

Տրապիզոնում Գ. Խալաթեանը գտել է ծանօթներ Լազարեան ճեմարանի նախկին սաներից։ Այդտեղ պատահել է նաև Աճառեանին, որ յայտնի է հայկական ուսումնասիրութիւններով, և բժ. Յ. Զաւրեանին, որ յայտնի է իր նախկին ճանապարհորդութիւններով Թիւրքիայում։

Տրապիզոնից ճանապարհորդները ուղևորվել են դէպի Էրզրում, ուր հասել են բաւական նեղութիւններ կրելուց յետոյ։ Ճանապարհին չը կան վայելուչ ապաստարաններ. բոլորը կրում է հին ասիական բնաւորութիւն։

— Էրզրումի տեսքը Տրապիզոնի ճանապարհից գործեց սքանչելի տպաւորութիւն,—պատմում էր Գ. Խալաթեանը։—Դժբաղդաբար, քաղաքը իր փողոցներով և կենցաղով հիասթափեցրեց բոլորովին։ Քաղաքի մէջ կան դիտողութեան արժանի նիւթեր։ Ազգաբնակութեան մէջ շատ տիպեր ինձ յիշեցնում էին մեր Ալեքսանդրոպոլի հին տիպերը, որոնք մի 20—40 տարի առաջ սովորական էին մեզանում։ Եւ զարմանալի չէ, որովհետև ալէքսանդրոպոլցիների մի մասը Էրզրումից է գաղթել։

Էրզրումից տեղական ռուսաց հիւպատոսի և ուրիշ հիւրերի հետ ճանապարհորդները այցելել են Լուսաւորչի վանքը, որ գտնվում է մի ժամ հեռաւորութեան վրա։ Այդ վանքում նշանաւոր են ի միջի այլոց այրերը, որոնց մասին ասում են, թէ իբր այնտեղ պատսպարվել են Հռիփսիմեանները նախ քան Վաղարշապատ գնալը։

Մանրամասն ծանօթանալուց յետոյ քաղաքի հետ, Գ. Խալաթեանը ուղևորվել է դէպի Կովկաս։ Ճանապարհին կանգ է առել Հասան-Կալէում և ծանօթացել այնտեղի ջերմուկի հետ։ Այդտեղ նա հանդիպել է օսմանեան պարլամենտի պատգամաւոր Վարդգէսին և տեղական վալիին։

Այնուհետև անցնելով Թօփրակ-Կալէի և Ջիվինի նշանաւոր պատմական տեղերով՝ հասել է ռուսական սահմանը։

— Ճանապարհորդութիւնը Թիւրքիայում բոլորովին ապահով է,—նկատեց Գ. Խալաթեան.—սպանութիւնները և աւազակութիւնները ներկայումս բացառիկ երևոյթներ են։

Գ. Խալաթեանը գտել է ազգաբնակութիւնը ընդհանրապէս աղքատ վիճակի մէջ։

— Երկիրը հարուստ է, բայց ժողովուրդը հարուստ չէ։ Շատ պէտք է աշխատել և լուրջ աշխատել, բարւոքելու երկրի տնտեսական դրութիւնը։

Խալաթեանը Թիֆլիսից կուղևորվի Ղրիմ, իսկ այնտեղից Մոսկվա։

Ա. Ք.

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 17 յուլիս

Երկու կարևոր լուր, երկուքն ալ իրարմէ շահեկան, որոնք արձագանգ կը գտնեն տեղական ազատ մամուլին մէջ, իսկ մենք ուրախութեամբ կը ծափահարենք։ Չորրորդ զօրաբանակի հրամանատարը, Իբրահիմ-փաշան, հրաման ստացած է տեղափոխուելու, և, կարծեմ, պիտի երթայ Ափրիկեան Տրիպօլիս։ Երկրորդ լուրն է, թէ Բաղէշի վալի ծերացած Թահիր-փաշան նոյնպէս հրաման ստացած է թողուլ Բաղէշի նահանգը, որ բաւականապէս տուժեց տարիէ մը ի վեր։ Առաջինի օրով քիչ մնաց, որ, պատմական մարտ 31-ի առիթով, Կարինի նահանգը մասնակցէր կիլիկեան համանման աղէտներու, եթէ իթթիհադեան ըն-

---

վրա։ Փորձերը կատարվել են հինգ, 20—28 տարեկան, սիֆիլիտիկների վրա, որոնց լիւէսը զանազան շրջաններումն է եղել, ի միջի այլոց եղել է և մէկը ժառանգական սիֆիլիսով։

Նոր միջոցը սրսկելուց հիւանդները զգացել են անտանելի ցաւեր, որոնք տևել են միայն երեք օր, իսկ յետոյ սկսել են կամաց-կամաց մեղմանալ և ապա դադարել։ Այժմ նոյն այդ հիւանդանոցում փորձեր են կատարվում մի շարք նոր հիւանդների վրա։ Երկրորդ և երրորդ շրջաններում սիֆիլիսի դէմ մաքառելու մասին բժիշկ Իվերսենը յայտնել է հետևեալը. «Ես համոզված եմ, որ նոր միջոցը նոյնչափ լաւ հետևանքներ կը տայ սիֆիլիսի և այդ շրջաններում. բուժելու մեթօդը կայանում է հետևեալում. վենայի—արիւնադարձ երակի—մէջ մտցվում է 0,4—0,5 գրամ դեղից և 48 ժամից յետոյ սրսկում են մկանների մէջ 0,3—0,4 գր. նոյն դեղից, որը միաժամանակ հրաշալի միջոց է ջերմի դէմ»։ Պրօֆեսոր Օ. Վ. Պետերսենի կատարած 800 փորձերից ոչ մինը անյաջող չէ անցել։ Մի քանի շաբաթ սրանից առաջ պրօֆ. Վէկսէլմանը Բեռլինի բժշկական ընկերութեան նիստում տուել է մի զեկուցում պրօֆ. Էրլիխի հակասիֆիլիսային նոր միջոցի մասին և մի շարք հետաքրքրական դէպքերից օրինակ բերել հետևեալը.

«Լիւէտիկներից մինը ընդունվում է մեր կլինիկում հիւանդութեան ամենածանր շրջանում. Նրա մորթին ունէր հողի գոյն, երեսը սպրդնած, կարծես մեռած լինէր։ Մարմինը ամբողջապէս ծածկված էր վէրքերով. Նրա օրգանիզմը կազմալուծվում էր և սարսափելի հոտ փչում քթից, որի միջնապատը արդէն փտել էր։ Հիւանդին կերակրում էին արհեստական միջոցով։

«Կլինիկի բժիշկը սկզբում չը դիմեց պրօֆ. Էրլիխի միջոցին, բայց երբ պարզ երևաց, որ հիւանդը այսօր կամ վաղը կը մեռնի, նրան նոր սկսեցին սրսկել վերջին միջոցը։ Երկու օրից յետոյ վէրքերը սկսեցին լաւանալ և կարճ ժամանակամիջոցում հիւանդը բոլորովին առողջացաւ»։

Պրօֆ. Alt-ը նոյն այդ միջոցը գործածել է ողնածուծի ծիւրախտի դէմ (сухотка спиннаго мозга) և հասել ցանկալի հետևանքի։ Ֆրանկֆուրտի պրօֆ. Էրլիխի հակասիֆիլիսային պրեպարատը կոչվում է իր և ճապոնացի բժիշկ Հատայի անունով—Էրլիխ-Հատա, կամ «606»։ Նա զառնաթթուային պրեպարատ է և կրում է 606 համարը այն առիթով, որ դա զառնիկի (arsenicum) 606-ական կապակցումն է։ Պրեպարատի քիմիական կազմը շատ բարդ է և գրվում է հետևեալ ձևով $C_{12} H_{12} O_2 N_2 As_2$ (dioxy-diamido-arsenobenzol), որը դեղափոշի է ծծումբի գոյնով։

Ուս. բժ. Վահ. Մամիկոնեան

Մոսկվա, 21 յուլիսի

պաներ գերմարդկային ջանքեր գործ ընելէն։ Երկրորդէն օրով, տեղական աւազակապետները, որոնք քիչ ու շատ ճնշուած էին սահմանադրութեան հռչակումէն, հետզհետէ դարձան իրենց նախկին սպառնութեանց, յափշտակութեանց և զինական սովորութեանց։ Իր բռնած ուղղութիւնը վերջերս հասաւ համիդական վարչութեան դրութեանը, սկսաւ հալածել ազատական ուժերը, Մուշի վանքերը յանկարծական խուզարկութեանց ենթարկեց։ Ու երբ, եկած բողոքներու վրայ, հրամաններ գացին կեդրոնէն, հին պատճառաբանութիւններով կարկտուքներ ըրաւ՝ ապացուցնելու, թէ խուզարկութիւն եղած չէ, այլ զինուորները վանքը գիշերած ըլլալով՝ հետաքրքրութեամբ աչքէ անցուցած են սրահները, սենեակները։

«Stamboul» ֆրանսական թերթը, կարենի հրամանատարին տեղափոխութեան լուրին առիթով կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ այդ նահանգին կարևորութեանը վրայ։ Կըսէ թէ «Էրզրումը կայսրութեան այն նահանգն է, որ թերևս բաղդաւոր է վալիի կողմէ, բայց թերևս վալին, վալիներուն մէջ, ամենէն բաղդաւորը չէ իրեն օժանդակող պաշտօնեաներու տեսակէտով։ Ու թերևս նոյն պայմաններու մէջ գտնուող ուրիշ շատ նահանգներէ աւելի կարժէր խորհիլ, թէ ինչ բան ըլլալ հնարաւոր է այդ հետաքրքրական նահանգին՝ Էրզրումի համար, որ շահեկան է որքան հայկական, նոյնքան քիւրդական յիշատակներով, քանի որ անոր մէջ կը գտնուին Թուրք թափառական ցեղերու առաջին մայրաքաղաքները՝ Երզնկա, Բաբէն, Սըրմալը-Զուքուր․ անկից է, որ ճամբայ ելան գրաւելու Արևմտեան Անատոլուն՝ կազմելու համար նոր ժամանակներու սկզբի ամենէն հսկայ կայսրութիւնը»։

Կը շարունակէ․ «Այդ նահանգին մէջ կապրին այսօր երեք ժողովուրդի տարբեր տարրեր, հակառակ իրենց կրօնքին ու սովորութեանց տարբերութեան։ Ազատական վալիի մը պաշտօնավարութիւնը, թոյլ հրամանատարի մը հեռացումը, որն որ տրամադիր չէր պէտք եղած ատեն խստութեամբ վարուելու երրորդ տարրին՝ քիւրդերու դէմ, ու ազատամիտ պատգամաւորի*) մը ներկայութիւնը, այդ ամենը անտարակոյս պիտի նպաստեն աւելի բաղձալի ներդաշնակութիւն մը պահպանելու Եփրատի ակունքին կողմերը, ու անոր ամբողջ ընթացքին վրայ»։

Անհրաժեշտ կը համարի բարենորոգումներ այդ տեղերու վրայ, որպէսզի բարձրացող գանգատները դադրին հիմնովին։ Վրէժի զգացումը չէ, որ պէտք է յագուրդ գտնէ․ կը բաւէ քանի մը անձերու տեղափոխութիւնը։

Գլխաւոր պակաս մըն ալ, որ մատնանիշ կընէ «Stamboul», սա է, որ Էրզրումի մէջ պաշտօնէութիւնը կը կազմեն տեղացիները։ Ազգականութիւնն է, որ գործած է ցարդ։ Պէտք է տեղափոխուին ատոնք, ու այդ եղանակով հողը կը պատրաստուի վարչային ուրիշ բարենորոգումներու համար, կուսակալն ալ կը նպաստաւորուի իր ազատական շարժումներուն մէջ։

Լուրջէն քիչ մըն ալ զուարճալիին անցնինք։ Պոլսի շուներուն ի նպաստ, որոնք աքսորուած են Մարմարայի Օքսիա կղզին, գթութեան ձայներ կուգան կենդանիներու պաշտպան ընկերակցութեան մը կողմէ։ Այդ բարեգութ ընկերակցութիւնը Գերմանիոյ Թագուհիին պատուակալ նախագահութեանը ներքև, հեռագրով դիմում ըրած է սուլթանին և խնդրած է, որ այդ կենդանիներուն տառապանքին վերջ մը դրուի։ Ո՞ւր էր այդ Թագուհին, օր մը օրանց մտքէն անցնէր երբեք տառապանքի ամբողջ երկիր մը, ուր կեանքը դժոխային տանջանքներու դատապարտուած էր, ուր կիներ, աղջիկներ, օրօրոցի երախաներ մարդկային գազանութեան զոհեր էին տարիներով․ մտքէն անցնէր երբեք, երբ ինքը յաղթական գնացքով իր կառքի ձիերը քշել կուտար՝ Համիդի հետ քով քովի նստած, թէ Պոլսի այդ սալայատակները ներկուած էին զոհերու արիւններով։ Ու մեծ ոճրագործն ալ իր կողքին բազմած իրենց Թագակիր հիւրընկալն էր։ Անցնինք։

Այսօր ալ պարիզեան թերթի մը, «Le Petit Journal», գթութեան ձայներ կը բերէ Պարիզէն ի նպաստ այդ շուներուն։ Կը ցաւի, որ Պոլսի փողոցներէ ժողվուած շուներուն համար՝ Մարմարայի Օքսիա կղզին զուարթ կեանք մը չի տար անոնց. ոչ ալ Մարմարայի ալիքները անուշ ըմպելի են։ Կենդանիներու պաշտպան ընկերակցութիւնը, իր վերջին նիստին մէջ, որոշած է խնդրել, որ կառավարութիւնը միջամտէ և 80,000 շուներուն տառապանքը վերջ գտնէ։ Եւ կը յուսայ, որ կենդանիներու բոլոր բարեկամները, առանց խտրութեան, զայրոյթի աղաղակ պիտի բարձրացնեն շուներու մասին բռնուած այդ անտարբեր ընթացքին դէմ․ ուստի կոչում կընէ բոլոր երկիրներու մամուլին բարոյական ազդեցութեանը, դադրեցնելու տեսարան մը, որ դատապարտելի է թէ առողջապահական և թէ մանաւանդ... (լսեցէք) մարդկութեան տեսակէտով։

Այդ պարոնները, մէկուկէս տարի առաջ, ուր Ադանայի մէջ արիւնը կը քալէր, մարդկային խժդժութիւնը հասած էր զարհուրելի նրբացումի, և օրէ օր, ժամէ ժամ, րոպէ առ րոպէ, վայրագութեան, գազանութեան դիակներ կը լողային կիլիկեան գետերու ալիքներուն յանձնուած, գուցէ այժմեան յուզմունքի մէկ չորրորդն ալ չունեցան, ու այսօր այդ գթութեան մարդիկը կը վրդովուին Համիդի առանձնաշնորհեալ էակներուն վիճակին վրայ, մանաւանդ մարդկային տեսակէտով։

Կը յուսանք որ, ընկերակցութեան փափագին համեմատ, բոլոր երկիրներու մամուլը ձայն կը բարձրացնէ ի նպաստ շուներուն և 20-րդ դարու սկիզբի մարդկութիւնը կը կանգնի իր մարդկային բարձրութեանը վրայ։

Շահէն

---

*) Ակնարկութիւն հայ պատգամաւորին, Վարդգէսի, որ պարլամենտի արձակուրդի առիթով կը գտնուի Կարին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ախալցխա, 23 յուլիսի

Երբ մեզանում էլ մուտք գործեց խոլերան, մենք դիմադրելու ոչ մի պատրաստութիւն չունէինք, ուստի և սկզբում զոհեր տուինք, սակայն պատշաճաւոր իշխանութիւնների կողմից ձեռք առնված խնամքի և խիստ միջոցների շնորհիւ համաճարակը չընդարձակվեց, զոհերի թիւը սահմանափակվեց և վերջին օրերս չէ լսվում նոր մահացութեան մասին։ Այնուամենայնիւ ամենամեծ զգուշութիւնը չը պէտք է ձեռքից թողնել, մանաւանդ այս ամառային խիստ շոգերի և մրգերի առատութեան ժամանակ։ Մենք սպասում էինք, որ բացի մեր քաղ. վարչութեան ձեռնարկած միջոցներից, ոստիկանական կարգադրութիւնից և սանիտարական հսկողութիւնից, պէտք էր կենդանի խօսքով էլ հասկացնել հասարակութեանը առողջապահական պայմանների կարևորութիւնը։ Դժբաղդաբար մեր ինտելիգենցիայի մէջ չը գտնվեց մի այնպիսի անհատ, որ այդ պակասը լրացնէր, և եթէ կային, ինչպէս բժ. Այվազեան և ուրիշներ, սակայն առաջինն այնքան ծանրաբեռնված է քաղ. և հասարակական պաշտօններով, որ անհնարին կը լինէր նրանից աւելին պահանջելը։ Սակայն, այսօր, համաճարակի առիթով նոր հրաւիրված բժ. Մէհրաբեանը, հէնց իր առաջին ծանօթութեամբ հասարակութեան հետ, խոստացաւ առաջիկայ կիրակի օրվանից դասախօսել խոլերայի մասին։ Նա իր առաջին դիմումով հասարակութեանը՝ արծարծեց այն միտքը, թէ պէտք է ուժեղացնել սանիտարական մարմինները (10 մասի բաժանված) նոր, թարմ, ինտելիգենտ ույժերով, որոնք մտնելով ժողովրդի մէջ՝ հասկացնէին առողջապահութեան պահանջած պայմանները, նրանց անհրաժեշտ. կատարելը, յոյս և հաւատ ներշնչէին դէպի բժիշկներն ու բժշկութիւնը և խորհուրդ տային չը ծածկել հիւանդներին և այլն։

Մի քանի խրատներ տալուց զատ, թէ հում ջուր չը խմել, զգուշանալ շատ միրգ ուտելուց, արբեցողութիւնից, ցանկութիւն յայտնեց հանգամանակութեամբ ձրի թէյատներ բաց անել և չքաւորներին միջոց տալ թէյ խմելու, զգուշանալով հում ջրից։ Այո, մենք ունենք այստեղ Կ. Հ. Բ. Ընկ. տեղական ճիւղը, նոյնպէս Ախալցխայի Հայ Կանանց Բարեգ. Ընկերութիւնը և նրանցից սպասում էինք մի շօշափելի օգտակար գործունէութիւն, սակայն թէյարաններ էլ չը բարեհաճեցին բանալ այս համաճարակի միջոցին։

Աւ. Աս.

—

Ղազախ, 25 յուլիսի

Խոլերան թէև շատ դանդաղ, բայց արդէն գործում է մեր գաւառում. մահվան դէպքեր եղել են Պօղոս-քիլիսայում, Վերին-Աղդանում, իսկ կասկածելի՝ Քարվանսարայում և այլուր։ Նահանգական և գաւառական բժիշկներ Տէր-Գրիգորեան և Սարգսեան այցելութիւններ անելով՝ տնօրինում են, ինչ հարկաւոր է։ Սանիտարական կոմիսիաները իրանց կոչման բարձրութեան վրա են մանաւանդ Դիլիջանում, Ղազախում և Քարվանսարայում. այս վերջինում գլխաւոր գործողներն են Մեսրոպ և Կոմիտաս քահանաները, նոյնպէս տանուտէր Անդրէաս Պապեանը, որի գործունէութեան մասին նահանգական բժիշկը յայտնեց իր հիացմունքը։

Զաք. ք. Ապրեսեան

—

Նոր-Բայազէտ, 23 յուլիսի

Ամսիս 20-ին, երեկ. ժամը 8-ին, յորդառատ անձրևների հետ խառն տեղաց կարկուտ, որը ժողովրդի մէջ վայնասուն առաջացրեց, քանի որ երկիւղ կար արտերը կարկտից փչանալու վերաբերմամբ։ Բայց, բարեբաղդաբար, կարկուտը մանր տեսակի էր, այն է՝ կաղնի մեծութեամբ, ուստի վնասներ քիչ հասցրեց բուսականութեան, մանաւանդ որ շատ հեռու հանդերում չէր տեղացած, այլ միայն քաղաքի և հիւսիսային կողմի մի քանի արտերի վրա։ Սակայն մօտ 3—4 ժամ այնպիսի յորդութեամբ տեղում էր կարկտախառն անձրևը, որ կարծես կուժերով ջուր ածելիս լինէին երկնքից։ Կարկտից անմիջապէս յետոյ բարձրացաւ մի սարսափելի հեղեղ, որ լցրեց քաղաքի «Կալեր» կոչված թաղի փողոցները, որտեղից ջրերը առատ վազում էին դէպի գետերը։ Մինչև առաւօտ հազիւ մաքրվեցին փողոցները ջրերից։ Բայց կարկտի մնացորդները՝ ձիւնակոյտերի նման մնացին փողոցներում դիզված, որոնք մինչև երեկոյ հալվեցին և փչացան։

Մանաւանդ գիշեր լինելով՝ ժողովուրդը մեծ երկիւղի մէջ ընկաւ հեղեղների վերաբերմամբ, որովհետև գարնանը ականատես էր եղել անպատմելի հեղեղների պատճառած վնասներին։

Ոչ միայն այս տարվայ երաշտութեան թողած հետքերը, այլ և 1907 թ. սոսկալի կարկտի անողորմութիւնը խոր-խոր վէրքեր է հասցրել մեր հասարակութեան սրտին։ Այն ժամանակ բնութիւնը աղէտալի կերպով պատժեց մեր ազգաբնակութեան՝ հողի հետ հաւասարեցնելով նրա հողագործական արդիւնաբերութիւնը ամբողջովին, իսկ այս անգամ բնութիւնը մի փոքր խղճահարվելով, որ առանց այն էլ երաշտը ցամաքեցրել, այրել է հողագործի ցանքերն ու բոյսերը, խնայեց սպառել նրա վերջին մնացորդն էլ, որը մի փոքր սպեղանի կարող է լինել նրա վէրքերի վրա։

Անձրևները դեռ մէջ ընդ մէջ շարունակվում են, որոնք թէպէտ հասունացած արտերին այնքան օգուտ չեն հասցնի, բայց և այնպէս կանաչ ցանքերին կարող են նպաստաւոր լինել։

Ս. Ե. Ա.

ՏԻԿԻՆ ԵՐԱՆԵԱԿ ՋԱՆՋՈՒՂԱԶԵԱՆ
(ԾՆ. ԲԷՕՐԷՔՃԵԱՆ)

—

Ներկայ յուլիսի 18 ին Ղլլարում խոլերային զոհ գնաց տեղական ծխ. երկդասեան դպրոցների վարժուհի տիկին Ե. Ջանջուղազեանը մատաղ հասակում։

Երկար չէ հանգուցեալի կենսագրութիւնը։ Իննսնական թւականներին աւարտելով Ախալցխայի օրիորդաց դպրոցը և ցանկանալով անպայման իր ձեռքի աշխատանքով ապրել, աշխատում է ինչպէս էլ որ լինի վարժուհի դառնալ։ Մի քանի տարի տնային վարժուհու պաշտօն վարելուց յետոյ, վերջապէս 1907/8 ուսումն. տարուց հրաւիրվում է Ղլլար՝ ծխական դպրոցի վարժուհու պաշտօնով։ Մէկ տարի՝ պաշտօնավարելուց յետոյ ամուսնանում է տեղի երիտասարդներից մէկի (այժմ հոգաբարձու) հետ և այնուհետև էլի շարունակում է իր սիրած պաշտօնը։ Գալիք ուսումնական տարվայ համար նորից հրաւիրված էր նոյն տեղը։

Ուսուցչական խմբի մէջ հանգուցեալը շնորհիւ իր բնաւորութեան քաղցրութեան և ընկերսիրութեան յարգանք էր վայելում։

Ղլլարի ուսուցչական խումբը յանձին հանգուցեալի կորցրեց մի քաղցր և լաւ ընկերոջ։

Յարգանք անժամանակ գերեզման մտնող ընկերոջ աճիւններին։

Ս. Խ—ն

ԽՈԼԵՐԱ

—

◆ Բիւլլետեն.—Յուլիսի 24-ի առաւօտ. ժ. 9-ից մինչև յուլիսի 25-ի առաւօտ. ժամը 9-ը Թիֆլիսում խոլերայով հիւանդացել են 5 հոգի, իսկ խոլերանման հիւանդութեամբ՝ 3 հոգի։ Հիւանդանոցում կային 49 հոգի, աւելացել են 3, առողջացել և դուրս են եկել 6, մեռել են 2, ներկայումս մնում են 44 հոգի։ Յուլիսի 25 ի առաւօտ. ժ. 9-ից մինչև յուլիսի 26-ի առաւօտ. ժամը 9 ը խոլերայով հիւանդացել են 4 հոգի, իսկ խոլերանման հիւանդութեամբ՝ 1 հոգի։ Հիւանդանոցում կային 44 հոգի, աւելացան 3, առողջացան և դուրս եկան 4, մեռաւ 1, ներկայումս մնում են 42 հոգի։

◆ Թիֆլիսի քաղաքային խոլերային հիւանդանոցում բժշկական մարմնից առաջինը խոլերայով վարակվեց և մեռաւ ֆէլդշեր Ա. Գալազուզովը։ Քաղաքային վարչութիւնը հանգուցեալի թաղմանը ներկայ եղաւ ամբողջ կազմով և դրել էր դագաղի վրա մի պսակ։ Հարց է բարձրացված ապահովելու քաղաքի հաշւով հանգուցեալի ընտանիքը։

◆ Խոլերան ընդարձակ չափեր է ստանում Բաթումում և Ախալցխայում։

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը յատկացրեց կրկին 800 րուբլի նահանգում խոլերայի դէմ մաքառելու համար։

◆ Կարսում խոլերան չէ նուազում։

◆ Խոլերան բուն է դրել բաւական ժամանակ առաջ Գորու գաւառի մի քանի գիւղերում։

—

24 յուլիսի

Պետերբուրգ.—Տուրգայեան շրջանը, Վոլգան մինչև Րիբինսկ, մինչև Նիժնի, Կազան, Վեատկա, Բէլայա և Վէտլուգա գետերը ճանաչվում են խոլերայից սպառնական։

Խոլերային հիւանդութիւնների մասին մի շաբաթվայ ընթացքում՝ հաղորդում են. Բերդեանսկում հիւանդացան 24, մեռան 10, առողջացան 10. գաւառում հիւ. 137, մեռ. 58։ Կերչում հիւ. 62, մեռան 29։

Կիևում հիւ. 50, մեռան 28. նահանգում հիւ. 563, մեռան 164։

Նիժնում հիւ. 102, մեռան 19. նահանգում հիւ. 220, մեռան 113։

Օրլովի նահանգում հիւ. 92, մեռան 47։

Պէնզայում հիւ. 21, մեռան 5. նահանգում հիւ. 193, մեռան 73։

Ռոստովի քաղաքապետութեան մէջ հիւ. 127, մեռան 29։

Րիբինսկի նահ. հիւ. 308, մեռան 102։

Սամարայում հիւ. 231, մեռան 95. նահանգում հիւ. 1165, մեռան 476։

Սիմբիրսկի նահ. հիւ. 198, մեռան 82։

Սիմֆերոպոլում հիւ. 74, մեռան 45. նահանգում հիւ. 449, մեռան 235։

Ստաւրոպոլում հիւ. 52, մեռան 14, առողջացան 30։

Խարկովում հիւ. 51, մեռան 9. նահանգում հիւ. 708, մեռան 308։

Եարոսլաւլի գաւ. հիւ. 129, մեռան 59։

Մոսկվայում հիւ. 2, մեռաւ 1 կին։

Բաքւում հիւ. 183, մեռան 57, առողջացան 27։

Խէրսոնի նահ. հիւ. 947, մեռան 371։

Օդեսսայում հիւ. 714, մեռան 41։

Տամբովի նահանգում 17—21-ը, հիւ. 78, մեռան 40։

25 յուլիսի

Ռոստով Դ./Վ.—Խոլերան մեծ չափեր է ընդունում։ Մինչև օրս հիւանդացել են 12,000-ից աւելի մարդ և մեռել են 5000-ից աւելի։

Պետերբուրգում հիւանդացան մի օրում 113, մեռան 30, առողջացան 19, կան 783. շրջակայքում կան 28։

Մի շաբաթում հիւանդացան Նիկոլաեվի գաւառի 32 գիւղերում 236, մեռան 94։

Խոլերան ընդգրկել է համարեա ամբողջ Վարնավինի գաւառը. մեռնում են ազգաբնակութեան 50%-ից աւելին։

26 յուլիսի

Պետերբուրգում հիւանդացան 83, մեռան 36 հոգի, կան 801։

Այսօր բժշկական մեծ կազմով մեկնեց Դոնի շրջանը խոլերայի դէմ մղվող կռիւը ղեկավարելու համար պրոֆ. Րէյնը։

Եկատէրինոսլաւի գաւառում մի շաբաթվայ ընթացքում հիւանդացան 157, մեռան 77, կան 143։

Վօզնէսենսկայա ստանիցայում հիւ. 38, մեռան 27։

Չերնիգովի նահ. հիւ. 73, մեռան 23։

Կազանի գաւառում վարակն աճում է։

Չերնիգովում հիւանդացաւ նահանգական բանտային տեսչի նախկին օգնական բժիշկ Շիտկովը։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Խոլերան Թիֆլիս ոտք դնելու օրից քաղաքի խմելու ջուրը հետազօտութեան ենթարկվեց ընդամենը 45 անգամ։ Վերջին 6 փորձերը ցոյց տուին, որ վարակիչ վիբրիոններ բոլորովին չը կան մեր սովորական խմելու ջրի մէջ։

◆ Ներկայումս բժ. Աղամալեանի սպանիչներ ֆէլդշէր Արշակ Մարտիրոսեանը գտնվում է Մետեխի բանտում, իսկ կինը Թամարան՝ նահանգական բանտում։ Ինչպէս պատմում են ականատեսները, մարդասպանը շարունակ վայ է տալիս գլխին, բացագանչելով՝ «ա՜խ, այս ինչ արի ես»։ Քաղաքի ազգաբնակութեան մէջ կտրականապէս հերքում են բժշկի մասին տեղեկութիւնները։ Յամենայն դէպս վերջնական արդարացի լուսաբանութիւնը երևան կը հանվի միայն դատարանում։

◆ Կիրակի օրը Վանքի աւ.-եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ հրապարակախօս Գր. Ջանշեանի մահվան տասնամեակի առիթով։ Հոգեհանգստի կարգը կատարեցին Թիֆլիսի քահանաները, որոնք եկել էին մասնակցելու հոգեհանգստին, ի յարգանս հանգուցեալի յիշատակի։ Բացի ստուարաթիւ հայ հասարակութիւնից, հոգեհանգստին ներկայ էին հայ մամուլի և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներ, նոյնպէս և օտարազգի հասարակական գործիչներ։

◆ Երէկ, յուլիսի 27-ին, տեղի ունեցաւ հանգուցեալ Սմբատ Լազարեանի թաղումը։ Առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանում խռնված էր բազմաթիւ հասարակութիւն։ Դագաղը վերցրին պաշտօնակիցները և ընկերները և տարան փոխ առ փոխ մինչև Մուղնու եկեղեցին։ Հանգուցեալի վրա դրված էին բազմաթիւ պսակներ, որոնցից մէկը նահանգական դատարանիցն էր, միւսը երդուեալ-հաւատարմատարների մի խմբից, երրորդը Արտիստական Ընկերութիւնից, մնացեալները յարգողներից և ազգականներից։ Թաղումը տեղի ունեցաւ Վերայի գերեզմանատանը։

◆ Բարձրագոյն կարգադրութեամբ կըրճատվում է կովկասեան ինտենդանտական վարչութեան պաշտօնեաների ցանկը։

◆ Այս շաբաթ երկրագործութեան գլխաւոր կառավարչի Կովկասի լիազօր Արխիպովը կը մեկնէ Պետերբուրգ, ուր քննութեան են առնվելու մի քանի հարցեր, վերաբերեալ երկրագործութեան և հողային բարեկարգութեան։

◆ Վերադարձաւ և ստանձնեց իր պարտականութիւնները պետական բանկի Թիֆլիսի գրասենեակի կառավարիչ Բէզօբրազովը։

◆ Թիֆլիս եկաւ պաշտօնական գործերով և կրկին Բագու վերադարձաւ քաղաքագլուխ Ռաևսկին։

◆ Մեզ հաղորդում են, որ կիրակի, յուլիսի 25-ին, երևանեան փոխ-նահանգապետ Բարանովսկի այցելեց Ղարաքիլիսայի ամառային դասընթացները և ծանօթացաւ նրա գործունէութեան հետ։ Դասընթացքների ղեկավար Ալ. Քալանթար ծանօթացրեց նրան դասընթացքների ծրագրի, տեսական և գործնական պարապմունքների, աշակերտների կազմի և ուսուցման մանրամասնութիւնների հետ. ինստրուկտոր Ա. Թամամշեան տուեց տեղեկութիւններ գործիքների, ուսման առարկաների, կաթի [illegible] մասին։ Կաթնատնտեսութեան վարպետ Խ. Դիլանեան ցոյց տուեց աշակերտների պատրաստած պանիրը, կեֆիրը և ուրիշ կաթնային մթերքները։ Փոխ-նահանգապետը այնուհետև այցելեց Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան բացած կօշկագործութեան արհեստանոցը, որտեղ կային արդէն պատրաստ կօշիկներ՝ բաւական հմուտ կարված։ Փոխ-նահանգապետը անում էր մանրամասն հարց ու փորձեր և շատ գոհ էր իր տեսածներից։ Փոխ-նահանգապետի գնալուց յետոյ տեղի ունեցան Ալ. Քալանթարի երկու դասախօսութիւնները ունկնդիրների համար։ Առաջին դասախօսութեան առարկան էր կենդանիներին կերակրելու եղանակների ընդհանուր տեսութիւնը, կերակրանիւթերի քիմիական բաղկացութիւնը, սննդարարութեան և մարսականութեան աստիճանների որոշումը և կերակրանիւթերի խառնուրդներ կազմելը։ Երկրորդ դասախօսութիւնը վերաբերում էր կովկասեան կաթնատնտեսական մթերքների բնորոշման։ Դասախօսը թւեց մեր երկրի զանազան մասերում գտնվող պանիրների, իւղերի և ուրիշ մթերքների տեսակները և արաւ նրանց տեխնիկական և տնտեսական գնահատութիւնը։ Դասախօսութիւններից յետոյ տեղի ունեցաւ զրոյց ունկնդիրների հետ։

◆ Մինչև քաղաքային դումայի գումարվելը (սեպտ. 6-ին) ընդունվել է հանգուցեալ Չէրքէզովի ընտանիքին իբրև օժանդակութիւն տալ ամսական 150 րուբլի։

◆ Թիֆլիսի անշարժ կայքերի վերագնահատութեան գործի շուտափոյթ աշխատութեան համար քաղաքային վարչութիւնը որոշել է կազմել նաև վեցերորդ գնահատիչ մարմին։ Մինչև օրս վերագնահատման աշխատանքները կատարվել են 11-րդ և 12-րդ քաղաքամասերում։

◆ Երկրագործութեան դեպարտամենտը 1911 թ. նախահաշւի մէջ 10,000 րուբլի է մտցնում Կախէթիայում ֆիլօքսէրայի դէմ կռւելու համար։

◆ Գործադրվում է սանիտարական բիւրօյի հերթական որոշումը Կուր գետի ձախ ափը հիմնովին մաքրելու մասին։

◆ Քաղաքային վարչութիւնը տեղեկացրել է շահախնդիր անձանց, որ էլեքտրական նոր կայարանը պատրաստ պէտք է լինի մինչև 1911 թ. հոկտեմբերի 1-ը։

◆ Ի նկատի ունենալով քաղաքում տարածված այն լուրերը, իբր հացթուխները հրաժարվում են թխել 3-րդ տեսակի հաց և վաճառել էժան սակագնով, Թիֆլիսի նահանգապետը պատուիրել է ոստիկանապետին՝ ստուգել այդ լուրերը։

◆ Շինական ազգաբնակութեան մէջ հետզհետէ ձգտում է նկատվում՝ բարելաւելու իր տնտեսական կեանքը կուլտուրական ֆակտորներով։ Իբրև շատ օրինակներից մինը՝ Օզուրգէթի գ. Կվիանի գիւղն է, որի բնակիչները յօժարակամ յանձն են առնում տալ մի մեծ հողաբաժին և իրանց հաշւով շինել գիւղատնտեսական տարրական դպրոց։

◆ Յուլիսի 23-ի գիշերվայ ժամը 2-ին Բալախանում տեղի ունեցած մեծ հրդեհը վնաս է տուել Կասումօֆների ֆիրմային 27,550 ռ. և եղբ. Միրզօյեաններին 10,750 րուբլու։

◆ Բիբի-Հէյբաթում, եղբարք Նոբէլ նաւթահանքում, արդէն մի քանի օր է խփում է ուժեղ ֆօնտան, որ օրական տալիս է 200,000 պուդ նաւթ։

◆ Լէնքօրանի գաւառապետը հաղորդում է նահանգապետին, որ «Դալալ» տեղում մի խումբ պարսիկ աւազակներ յարձակվեցին և կողոպտելուց յետոյ սպանեցին 8 ղալխավարցիների և 2 օրթուզալցիների, որոնք վերադառնալիս են լինում տուն անասուններ վաճառելուց յետոյ։ Չարագործներից ոչ ոք չէ ձերբակալված։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Գէորգ-Մեսրոպ. «Քրիստոնէութեան մուտքն ի հայս Գրիգոր Լուսաւորչէն առաջ»։ Կ. Պօլիս, 1910 թ., 72 երես, գինն է 5 դահեկան։

Գէորգ-Մեսրոպ իր ներկայ գրքոյկով տալիս է մի քննադատական ուսումնասիրութիւն քրիստոնէութեան առաջին քարոզութիւնների Հայաստանում։

Նա աշխատում է ցոյց տալ, որ Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալները չեն քրիստոնէութեան կարապետները Հայաստանում, այլ Յակոբ Մծբնացի և Դանիէլ ասորի։

Այն մեծ նշանակութիւնը, որ մեր ժողովուրդը տալիս է սուրբ Յակոբին, հեղինակի ասելով, բոլորովին համապատասխան է պատմական իրականութեան։ Եւ Յակոբ Մծբնացին, արդարև, մեծ գործ ունի կատարած հայ տարրի համար։ Թէ Յակոբը և թէ Դանիէլը ասորիներ էին, ոգևորված առաքելական կոչումով, նուիրված քրիստոնէութեան տարածմանը, ուր որ հնարաւոր էր։

Եւ առհասարակ շատ մեծ է ասորական քարոզիչների և մտաւոր գործողների ազդեցութիւնը հայերի վրա մինչև Լուսաւորչի երևալը։

Գրքոյկը կարդացվում է հետաքրքրութեամբ։ Հեղինակը օգտվել է զանազան հայ և օտար աշխատութիւններից իր քննական ուսումնասիրութեան համար։ Ցանկալի աբում ենք ընթերցողին ծանօթանալ գրքոյկի հետ: Ա. Ք.

ՌԵՑԵՆԶԻԱՅԻ ՓՈԽԱՐԷՆ
«ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ» II ՀԱՏՈՐԻ ԱՌԻԹՈՎ

Չեմ կարող իմ զարմանքը չը յայտնել յիշեալ գրքի յարգելի կազմողներին՝ ահա ինչ առիթով:

Յ. Պարոնեանի գրուածքների շարքում նրանք գրքում զետեղել են «Ազգային Ջոջեր»-ից «Գրիգոր Արծրունի» պատկերը, որն, ինչպէս յայտնի է, հանված է Կովկասում երկու թէ երեք անգամ տպագրված այդ հեղինակութեան էջերից: Դրանով, համարձակվում ենք կարծել, հրատարակիչները՝ Կ. Հ. Հրատ. Ընկերութիւնը՝ հարկաւ չեն ցանկացել Արծրունուն շահել, այլ յարգել են հեղինակի յիշատակը՝ տեղի չը տալով այդ մի տեսակ պասկվիլին: Աւաղ, ամեն գրականութեան մէջ, ինչպէս և մերում, անգամ մեծ կամ նշանաւոր գրողները պատահել է որ մեղանչել են գրականութեան դէմ, զոհ դառնալով իրանց խառնուածքին (տեմպերամենտ), րօպէական կամ երկարատև կրքին, անձնական ատելութեան և այլն, բայց «քրիստոմատիա» կազմողները պարտական են ընտրութիւն անել և տալ օրինակելի գրուածքներ: Մանաւանդ դա պարտաւորական պիտի լինի նրանց համար, որոնք գրում են. «Մեր նպատակը եղել է՝ Մայրենի Գեղեցիկ Դպրութիւնը (ինչու գլխատառերով. ծան. Պ. Զ.) համարել իբրև հարազատ մօր սննդարար կաթն և նրանով սնունդ տալ սնվող սերնդի լեզուին»:

Մենք կարծում ենք, որ գեղեցիկ դպրութեան միջոցով մենք սնունդ ենք տալիս առաւել մատաղահասների ոչ միայն լեզուին, այլ և մտքին, և երկրորդին՝ գուցէ նախամեծար առաջինից: Եւ երեւակայում ենք այն դասարանի դրութիւնը, որը կարդալով «Գրիգոր Արծրունի» գրուածքը՝ ցանկանար աւելի մօտից ծանօթանալ այդ անձնաւորութեան հետ և համեմատել իրականութիւնը Յ. Պարոնեանի նկարագրածին: Որքան էլ անգամ բացասական լինի ուսուցչի վերաբերմունքը դէպի Գրիգոր Արծրունին, կարծում ենք, չի հաւասարվի Պարոնեանի պասկվիլին...

Պետրոս Զաքարեան

Յ. Գ.—«Հայ գրողների» II հատորի առաջաբանում կազմողները պատասխանում են մամուլում—գլխաւորապէս «Մշակում»—լոյս տեսած նկատողութիւններին և խոստանում են I հատորի երկրորդ հրատարակութեան մէջ մտցնել մոռացմամբ բաց թողնված հեղինակներին:

Միայն խոստովանելը լաւ յատկութիւն է, առաւել՝ նրա ուղղելը. դա պատիւ է բերում կազմողների անաչառութեանը:

Բայց նոյն առաջաբանում, մեր կարծիքով, նրանք շատ անաջող են ջրում և մի առարկութիւն, թէ ինչու գրքի մէջ չը կան նմուշներ նշանաւոր հայ հրապարակախօսների գրուածքներից: Այստեղ պոլեմիկական ազարտով բռնված կազմողները կորցրել են իրանց սառնասրտութիւնը: Ահա կարդացէք այս կտորը. «Մամուլը կամ հրապարակախօսութիւնը այն հանապազօրեայ սնունդը չէ, որ մենք խնդրում ենք նոյնիսկ աղօթքով: Նա ռուսի արտայայտութիւն է՝ ով գիտէ ինչ միտումով արտայայտված (ընդգծումը մերն է): Այսօրվայ թէժ առաջնորդողը վաղը կորցնում է իր նշանակութիւնը: Հրապարակախօսութիւնը ոչ միայն գեղեցիկ դպրութիւն չէ, այլ նա գրականութիւն էլ չէ, թէկուզ ազդեղ»:

Ներկայումս մենք au courant չենք բանահիւսութեան տեսութեանը և չը գիտենք անգամ՝ պահպանվե՞լ են արդեօք այն հինաւուրց բաժանմունքները, որոնցով 25—30 տարի սրանից առաջ լցրել են մեր ուղեղները: Հազիւ թէ: Եւ սակայն մենք համեստաբար կարծում ենք, որ հրապարակախօսութիւնը պատկանում է գրականութեանը, ինչպէս մարդկային մտքի ամեն մի ստեղծագործութիւն՝ խօսքով արտայայտած: Գէթ այն չափով, ինչպէս գրականութիւն են համարում յարգելի կազմողները ճառեր, դատողութիւններ, էպիստոլար ձեր (նամականի), որոնց օրինակներ—աջող թէ անաջող—զետեղել են իրանց գրքի երկու հատորներում: Իսկ եթէ հրապարակախօսութիւնը միտումով է գրված, կամ նա թիւված է, ապա նրան արտաքսել պէտք է քրիստոմատիայից, ինչպէս և Յ. Պարոնեանի «Գրիգոր Արծրունի» պասկվիլը և դրա նման գեղեցիկ դպրութեան արգասիքներ...

Գրութիւնս երկարեց, սակայն մի նկատողութիւն ևս. արևմտեան և նոյնիսկ Թիւրքահայ գրողներ ասելով մենք հասկանում ենք և Մխիթարեան միաբանութեան երկու հատուածների ներկայացուցիչներին. սակայն նրանցից տրված է միայն Ղ. Ալիշանը. դա էլ մոռացութեան նշան է թէ՞ մեզ կառարկեն, որ նրանք մեծ մասամբ գրաբար են գրել, ուստի և չեն զետեղված: Բայց Կ. Պոլսի մեծ և փոքր գրողներից բերված նմուշներում քիչ չեն գրաբար գրուածքներ, կամ գրուածքներ, որոնք ոչ գրաբար և ոչ էլ աշխարհաբար են... Պ. Զ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

II

Թաւրիզ, 18 յուլիսի

Թաւրիզում ամենից աւելի աչքի է ընկնում քաղաքային դուման և գործադիր վարչութիւնն իր եռանդուն գործունէութեամբ: Համարձակ կարելի է ասել—միակ հոգատար և գործունեայ մարմինն է վերջինս, որ՝ այսօրվայ կրիտիքական րօպէներում, երբ սպառնում է խոլերայի ուրուականը, անխոնջ աշխատանք է թափում փողոցների և առհասարակ քաղաքի մաքրութեան համար: Քաղաքին ջուր մատակարարելու տգեղ սիստէմը ծանօթ է արդէն. շատ տեղերում վրան-բաց ջրանցքներով են հասնում ջրերը տներում պատրաստ ջրամբարները, խմելու և ուրիշ գործածութեան համար: Յիշեալ ջրանցքները միշտ ենթակայ են վարակման. քանի որ պարսիկ կանայք մեծ մասամբ իրանց կեղտոտ ցնցոտիները ջրանցքների բաց տեղերումն են լուանում միշտ: Քաղաքային վարչութեան առաջին և գլխաւոր գործն եղաւ այդ չարիքի առաջն առնել: Այս նպատակին յատկացնելու համար գեներալ-նահանգապետը 1000 ր. նուիրեց, որով ջրանցքների բացերը պէտք է գոցվեն, չը թոյլ տալով ոչ ոքի կեղտոտելու քաղաքի ջրերը: Որովհետև պարսիկ ժողովուրդը սովորութիւն ունի հիւանդներին թաքցնելու, այդ պատճառով առանձին նէգմիէների պաշտօն դըրված է խուլ փողոցներում աւելի հսկողութիւն կատարելու և անմիջապէս զեկուցում տալու սանիտարական յանձնախմբին՝ եթէ խօլերային դէպք կամ մահացութիւն տեղի ունենայ և այլն:

Թաւրիզում և շրջակայքում դեռ ևս չը կան հիւանդութեան նշաններ. միայն Արդաբիլն է այդ կողմից անբարեյաջող. դրա համար էլ Նիրում և Սարաբում կան կարանտիններ՝ հիւանդութիւնը չը տարածվելու համար:

Այստեղ կազմվել է պարսիկների շրջանում «Հայրենասիրաց» անունով մի ընկերութիւն՝ մէթէնխաններ, որի գոյութեան նպատակն է նպաստել սահմանադրական րէժիմին: Սրանք համարվում են առաւել ձախակողմեան սահմանադրականներ: Ընկերութիւնը հեռագրով պահանջել է մէջլիսից, որ հրաւիրվեն եւրոպացի խորհրդականներ զանազան պաշտօնատներում գործակցելու համար. և երկրորդ՝ առաջարկել է իսպառ մերժել արտաքին փոխառութիւնը և ջանալ գլուխ բերել ներքինը: Մեր կարծիքով յիշեալ հայրենասէրների դերը աւելի խանգարող բնաւորութիւն է կրելու, քան թէ մի այլ օգտակար ձեռնարկութիւն՝ եթէ հետևենք անցեալի փորձերին:

Վաղուց է, որ զգալի էր Թաւրիզում մի վաճառականական առեանի գոյութիւնը, որն ունենար միջազգային բնոյթ: Այդ միտքը գլուխ գալիս է արդէն Մուխբիրուս-Սալթանէի նախաձեռնութեամբ, որին մասնակցելու են, բացի թուրք և հայ անդամներից, նաև եւրոպացի վաճառականներ: Chambre de Commerce-ի հաստատութիւնը մի անհրաժեշտութիւն է Թաւրիզի համար և ազգաբնակութիւնը շատ բարիք է սպասում նրանից:

Թէհրանի խայտառակ կաբինէտի կազմվելու լուրն ստացված է արդէն. թէ ինչ կը լինի նրա գործունէութիւնն ու յարաբերութիւնները, կը հաղորդեմ յետագային:

Հայկազուն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Կիեւի շրջանի առաջ ինտենդանտ գեն.-մայոր Տօպօր-Ռաբչինսկին հեռացվեց պաշտօնից:

ՄՈՍԿՎԱ: Քաղաքային վարչութիւնը մի խումբ սեղանաւորների հետ պայմանագիր կապեց 24,673,000 րուբլու $4^{1}/_{2}$ %-այինին փոխառութիւն ստանալու մասին: Փոխառութիւնը ըէալիզացիայի կենթարկեն Լոնդոնի «Եղբայր Բէրինգ» բանկը և Մոսկվայի ու Պետերբուրգի խոշորագոյն բանկերը:

ՕԴԵՍՍԱ: Պրիվօզնայա հրապարակի վրա և «Զաստավա» կայարանում երևան հանվեց ժանտախտի չորս դէպք:

Ցուցահանդէսի տարածութեան վրա գազի պայթումից այրվեց ճաշարանը. վնասները 40,000 րուբլու են:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ: Սանիտարական-գործադիր մասնաժողովի արտակարգ նիստում մշակվեց մի շարք միջոցներ ժանտախտի մուտքը Սեվաստոպոլ արգելելու համար: Որոշվեց բժիշկ ուղարկել Օդեսսա մկներին ոչնչացնելու միջոցների հետ ծանօթանալու համար:

ՌԻԳԱ: Բերկէտ կիւշ գիւղում հրդեհից ոչնչացան 150 տներ: Կրակի մէջ զոհվեցին 4 մարդ:

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ: Ստարօկրիմի պօստային գրասենեակի պետ Գաէվսկին փորձեց սպանել գրասենեակը քննող Զագուլինսկիին, սակայն զինաթափ եղաւ: Գործը յանձնվեց քննիչին:

ՍՕՖԻԱ: Կիւստենդիլ եկան 70 փախստականներ Շտիպ գաւառից, ուր սկսվել է ազգաբնակչութեան զինաթափումը:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

Օրէ-օր շատացող պահանջը ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ վերաբերմամբ առիթ է տուել վերջին ժամանակներս երևան գալու բազմաթիւ փոքրարժէք կեղծիքներ, որոնք առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանող զանազան անուններով (սպերմատին, սպերմինօլ, սպերմօլ, սեկարովեան հիւթ, հեղուկ և այլն) և միևնոյն ժամանակ կեղծողների կողմից առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ համահաւասար և նոյնիսկ նրանից բարձր ազդեցութիւն ունեցող դեղ: Կեղծողները յաճախ լինում են այնպիսի մարդիկ, որոնք բժշկականութեան հետ ոչ մի առնչութիւն չունեն, օրինակի համար՝ դեղավաճառ և պարֆիւմէրի խանութներ ունեցողները և այլն: Հասկանալի է, որ այդօրինակ կեղծիքները բժշկականութեան և գիտութեան հետ առհասարակ ոչ մի կապ չունեն, սակայն, որպէսզի գիտական բնաւորութիւն տրված լինի նրանց, կեղծողները իրանց ռէկլամների մէջ բերում են գրականութեան և բժիշկների գիտողութիւններ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ մասին՝ մոլորութեան մէջ գցելով ոչ միայն հիւանդներին, այլ և պ. պ. բժիշկներին:

Ի նկատի ունենալով այդ, մենք պարտք ենք համարում ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ յիշեալ կեղծիքներից այն անձերին, որոնք օգտվում են ՍՊԵՐՄԻՆԻՑ: Գրականութեան մէջ գտնվող բոլոր բազմաթիւ դիտողութիւնները գիտնականների և բժիշկների կողմից՝ արված ՍՊԵՐՄԻՆԻ բուժիչ ազդեցութեան մասին, այն է՝ նեվրաստենիայի, սեռական թուլութեան, ծերութեան, իստերիայի, նեվրալգիայի, արեան պակասութեան, թոքախտի, սիֆիլիսի, սնդիկային բժշկութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (չաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախում, պէրէբօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացման, ալկօհոլիզմի, ողնաշարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից թուլացած լինելու, յղանալութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ— վերաբերում են ԲԱՑԱՌԱՊԷՍ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, հետևաբար և խընդրում ենք գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել „ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ" անուան և ֆիրմայի վրա, որովհետև ուրիշ պատրաստվածները ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ նմանեցված կեղծիքներ, որոնք՝ ազդեցութեան տեսակէտից՝ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ քանի որ միակ իսկական սպերմին ներկայանում է ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ: Սրուակը 3 ռուբ.: Գրականութիւնը՝ ուղարկվում է ըստ առաջին պահանջման ձրի:

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ

ՊՐՕՖԵՍՍՕՐ ԴՕԿՏՕՐ ՊԷԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ

Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ պալատի—Ս.-Պետերբուրգում:

(П. 77035.) 455. 8—6

ՊՕՐՏՍՄՈՒԴ: «Ա. Պրիմա» ստորջրեայ նաւում պայթումից վիրաւորվեցին երկու օֆիցէրներ և չորս նաւաստիներ:

ԼՈՆԴՕՆ: Եկաւ ռուսական նաւատորմը:

ՓԱՐԻԶ: Քաղաքի կենտրօնում վերստին մահափորձ եղաւ մի քաղաքապահ ոստիկանի դէմ: Ոստիկանը ծանր վիրաւորված է. սպանվեց պատահմամբ անցնող մի գաղտնի ոստիկան:

25 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Այսօր ձիարշաւների նախավերջին մեծ օրն է: Շահվեցին 29,000 րուբլու մրցանակներ. գլխաւոր 10,000 րուբլին տարաւ Լազարեանների «Դարեալը».

ՍԱՐԱՏՕՎ: Պօկրովսկում այրվեցին 106 տուն բոլոր ստացուածքով և մօտ 5,000 պուդ հացով. վնասը 50,000 րուբլու է:

ՕԴԵՍՍԱ: Բացվեց լեհ նկարիչների պատկերների ցուցահանդէսը:

ԻՐԿՈՒՏՍԿ: Բացվեց համապետական միսիօներական համագումարը Տիխօն արքեպիսկոպոսի նախագահութեամբ:

ՄՕՍԿՎԱ: Նիժնիյ-Կօտլի տեղի մօտերում չարագործները Ռոմանովի ալիւսագործարանի դրամատարից յափշտակեցին 4000 րուբլի:

ԵԱՐՕՍԼԱՎԼ: Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, 5 շաբաթվայ ընթացքում նահանգում հիւանդացել են կծղականցաւով (դաբաղ) 30,000-ից աւելի գլուխ անասուն:

ԿԱՀԻՐԷ: Բանաստեղծ Հայեաթին յեղափոխական բանաստեղծութիւններ հրատարակելու համար դատապարտվեց մի տարով բանտարկութեան:

26 յուլիսի

ՄՕՍԿՎԱ: Վախճանվեց 80 տարեկան հասակում Նէստոր եպիսկոպոսը:

Գիշերվայ ժամը 1-ին վախճանվեց Փոքր Թատրօնի արտիստ Միխայիլ Սադօվսկին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բարձրագոյնս հրամայվեց Պետերբուրգի պօլիտեխնիկումի ինստիտուտին կից հաստատել երկու թօշակաւորների տեղ Էմմանուէլ Նոբէլի անուան՝ նաւթարդիւնաբերութեան մասին լաւագոյն հետազօտութիւն անող ուսանողների համար:

ԽԱՐԿՕՎ: Բացվեց լօմբարդների կարգադրիչների համագումարը:

ԱՍԽԱԲԱԴ: Ղզըլ-Արվադում երկաթուղագիծը ջրի տակն է. ջրի տակն են նաև բազմաթիւ շինութիւններ. մարդիկ ազատվեցին տանիքների վրա. գնացքներն առժամանակ չեն երթեւեկում:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—$12^{1}/_{2}$—$1^{1}/_{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1^{1}/_{2}$—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—$6^{1}/_{2}$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—80

Թիֆլիսի Քաղաքային Ուպրավան

սրանով յայտնում է Թիֆլիսի անշարժ կայքերի տէրերին, որ քաղաքի անշարժ կայքերը վերագնահատող կատարողական կօմիսիան XI քաղաքամասում վերջացնելով վերագնահատման գործը, օգոստոսի 2-ից սոյն թւի կը ձեռնարկէ X քաղաքամասի կայքերի վերագնահատման աշխատանքներին, ուր և կուղարկվեն վերագնահատիչ բոլոր խմբերը՝ իւրաքանչիւրին յատկացնելով որոշ թաղամաս: 873. 1—1

Լոյս են տեսել և վաճառվում են
բոլոր գրախանութներում

Ա. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆԻ

կազմած դասագրքերը

1) «Թւաբանական խնդիրներ և օրինակներ», Ա. տարի (առանձին գրքով) . . . 12 կ.
2) «Թւաբանական խնդիրներ և օրինակներ», Ա. պրակ, I և II տարի, գ. տպ. . . . 25 կ.
3) Նոյն, Բ. պրակ, III տարի, գ. տպ. . . . 30 կ.
4) Նոյն, Գ. պրակ, IV տարի, բ. տպ. . . . 30 կ.
5) Նոյն, Դ. պրակ, V տարի . . . 40 կ.
6) Նոյն, Ե. պրակ, VI տարի . . . 50 կ.
7) «Ձեռնարկ Թւաբանութեան» . . . 50 կ.

Պահեստը գտնվում է «Գիր» գրավաճառանոցում.
(Վելիամինովսկայա փ-ղ. տ. № 7)
(չ. ու.) Գրավաճառներին 25% զեղչ: 868. 2—1

ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՈ
(ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻՆ կից)

ՄԷԿ ՄԻԼԻՈՆ 700 ՀԱԶԱՐ

քաղ. սանտ. ընտիր ԿԼԻՇԷ փայտի, պողպատի, պղնձի և ցինկի վրա տրվում են վարձու պարբերական հանդէսների, դասագրքերի, ալմանախների, ալբոմների, օրացոյցների համար: ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ամեն տեսակ կլիշէների պատուէրներ, որ պատրաստվում են Եւրոպայի հռչակաւոր արհեստանոցներում: ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ տպագրական գործի հետ առնչութիւն ունեցող ամեն տեսակ պատուէրներ: ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՆ ցանկացողների համար օրացոյցներ, գրքեր, ալբոմներ, բրօշիւրներ, պիէսներ և այլն և այլն:

Դիմել Тифлисъ, Бюро Печати. Мадатовская № 5.
(չ. ու.) 810. 0—7

ՀԻՊՆՕՏԻԶՄ

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ

Հիպնոտիզմը բնական ձիրք չէ: Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան

◆

Հիպնոտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը:
Հիպնոտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը:
Հիպնօզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են:
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը: Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ աքանչելի ուժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ալշեցուցիչ ցուցահանդէսներ թատրօններում կամ մասնաւոր տներում և դառէք պրօֆեսիօնալ հիպնոտիստ:
Սովորելու ծախքը շատ չնչին է:
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօսացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն Հիպնոտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգեհաստութեան և Տելեպաթիի մասին: Այս գրքոյկն ստանալու համար պիտի ուղարկել 10 կոպէկի նամականիշ ճանապարհածախքի համար:

ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ: Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ:
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A.
(ե. շ.) 689. 100—16

Ախալքալաքի հայոց ծխական երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է

ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ

միջնակարգ կրթութեամբ, շաբաթական 18 դասով 800 ռուբ. ռոճիկով: Ցանկացողները դիմելու են մինչև օգոստոսի 10-ը հետևեալ հասցէով. г. Ахалкалаки. Председателю-попечителю И. Арутюняну.
(օ. մ.) 859. 3—2

Վեհափառ Կաթողիկոսի
Ամառանոցի վանքում

18 գոյնով մեծադիր պատկեր

ԳԻՆԸ 3 Ր.

— ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ —

միևնոյն հասցէով ստացող բաժանորդներին ձրի:

Դիմել Тифлисъ. Бюро Печати, Мадатовская, 5.
(ե. կ.) 811. 0—6

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

ճեմարանաւարտ և գիմնազիաւարտ փնտռում են

← ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՊԱՇՏՕՆ →

Ունեն մի քանի տարվայ փորձառութիւն: Առաւելութիւն է տրվում պարսկահայ դըպրոցներին: Հասցէն՝ Эривань, Каравансарайская ул., № 32.
(կ. չ.) 864. 2—2

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինովսկայա փող. № 8

Քամալեանց Ս. ՏԻՐՈՋ

կազմած կրօնի գրքերը:

1) Կրօնի դասատուութիւնը Ա. բաժանմունքում, ուղեցոյց ուսուցիչների համար. գինը 40 կ.:
2) Կրօն Ա. բաժ. աշակ. համար (բարոյախօս. առակներ և Յիսուսի կեանքից պատմուածներ). գինը 15 կոպ.:
3) Կրօն բ. բաժ. աշակ. համար (Նահապետների կեանքից պատմուածներ). գինը 20 կոպ.:

Դիմել «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրախանութներին: Շուտով լոյս կը տեսնի «Կրօն» Գ. տարի:
(չ. ու. կ.) 867. 3—1



ԿՈՐՉԵՆ ՈՍԿԻ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԸ. ԷԺԱՆ -ԱՆԿԱՐԵԼԻ Է.

Ցամարդ. համար նոր ձևի ժամաց. ֆրանս. իսկական ոսկուց, բաց, շքեղ գը փորով «Prima Roskop» մարկայով. այդ ժամաց. մասնագէտը նոյնիսկ չէ կարող զանազանել 56 յարգի իսկական ոսկէ ժամացոյցից: Բացի շքեղ լինելուց՝ «Prima Roskop» ժամացոյցը չփչացող. ամենալաւ շինուածքով է, ժընէվեան յայտնի ֆաբրիկայի գործ: Լարումը կոթից՝ 40 ժ. մի անգամ—«Remontoir». մինչև րոպէները ուղղված ընթացքով, 6 տ. գրաւոր երաշխաւորութեամբ: Գինը առաջ 12 ր. էր, այժմ միայն 2 ր. 90 կ., 2 հատը 5 ր. 40 կ.: Այդ ձևի խուլ ժամաց.—4 ռուբ.: Մեր ֆիրմայի արտադրութիւնները տարածելու համար՝ մենք կըսում ենք խոստանք. ժամաց. իբրև պրէմիա ձրի՝ 1) Շքեղ շղթայ նոյն ոսկուց. 2) ԲՐԻԼՕՊ ՆՈՐՈՒԹԻՒՆ.—Աւտօմատիկ սինեմատոգրաֆ հետաքրքր. տեսարաններով կամ թէ նոյն 84% արծաթից ոսկեզօծ. 3) Դ-ր Նօսի ծխափող-ապարատ՝ անվնաս ծխելու պապիրոս կամ սիգար. և կամ թէ գրելու համար գրպանի պրիբոր. 4) Այծեմուշկի քսակ ժամաց. փչանալուց պահել համար: Պատուէրներն ուղարկ. ենք վերադիր վճ. և առանց կանխավճ.: Հասցէն՝ ВАРШАВА Складъ часовъ Т-во „Милано". Дзикая ул. № 3—М 1—4 ժամաց. համար ճանապարհածախք հաշվում 50 կ.: Ով տեսնէ այդ ժամաց. նա կը հաւատայ, որ նրանք իսկական ոսկուց են: ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Կանացի բաց ժամաց. նոյն մետաղից՝ կանացի կոմպլէկտով 3 ր. 90 կ.: Կանացի խուլ ժամաց.—7 ռ.: Թղթակցութիւններ ռուսերէն կամ գերմաներէն:

(Ե.) (В. 48476) 845. 3—2

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.